

Ալեքսանդր Ս. Մանասյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԱՐՑԱԽ-ԱԳՐԲԵՁԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի իրավական բաղադրիչները*

Բանալի բառեր – Ղարաբաղյան հակամարտություն, էթնոքաղաքական կոնֆլիկտ, հիմնախնդրի սեփական իրավական հիմքեր, Ադրբեջանական Հանրապետության լեզվատիմության խնդիր, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լեզվատիմությունը:

Մուտք

Միջազգային ցանկացած կոնֆլիկտ, իսկ Ղարաբաղյան կոնֆլիկտը մեր օրերում այդպիսին է¹, իր գոյաբանության մեջ բազմաչափ սոցիալական երևույթ է, որի բնույթի համարժեք իմաստավորումը պահանջում է համալիր մոտեցում: Ինչ վերաբերում է Ղարաբաղյան հակամարտությանը², ապա դրան նվիրված ուսումնասիրություններում ցայժմ առաջին պլան են մղվել նրա պատմական, իրավական ու քաղաքական տեսանկյունները, այն դեպքում, երբ խնդրի խորքային ըմբռումը և կոնֆլիկտի առարկայի հստակ ձևակերպումը պահանջում են վերլուծական անդրադարձ նրա մասնակիցների արժեքային ու քաղաքակրթական կողմնորոշումներին ու նպատակներին, հոգեկերտվածքին, այլ էթնոսների հետ հարաբերվելու ավանդույթներին ու քաղաքական վարքին, որը բացատրություն է ստանում նրա անցած պատմական ճանապարհով: Երևույթի վերլուծության տարբեր տեսանկյունները փոխկապակցված են, լրացնում են միմյանց և միասին են պայմանավորում իր բնույթին համարժեք ու ամբողջական նրա պատկերը: Եվ դա հասկանալի է, քանի որ դրանք վերաբերվում են միևնույն երևույթի տարբեր կողմերին: Սա նշանակում է, որ ոչ մի կոնֆլիկտ լիարժեք բացատրություն չի կարող ստանալ այդ տեսանկյուններից որևէ մեկի անտեսումով:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 1.03.2018:

¹ Ավելի ստույգ՝ այն նախկին Ադր. ԽՍՀ ներսում տասնամյակներ շարունակ լատենտ ձևերում ընթացող էթնոքաղաքական կոնֆլիկտից միջազգային վերաճած-փոխակերպված կոնֆլիկտ է:

² **Կոնֆլիկտ** և **հակամարտություն** հասկացություններն ունեն իմաստային որոշ տարբերություններ: Պարտադիր չէ, որպեսզի կոնֆլիկտը ծավալվի որպես զինված բախում, մինչդեռ՝ հայերեն **հակամարտություն** բառը «հակված է» կրելու այդ իմաստը: Ոճական բարեհարմարության նկատառումներով հոդվածում դրանք օգտագործված են նաև որպես հոմանիշներ:

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 2 (62), ապրիլ-հունիս, 2018
ՎԿՄ համահայկական հանդես

Հասնել երևույթի գոյաբանական ինքնությանը և այդ հիմքի վրա որոնել նրա կարգավորման ուղիները. այսպիսի ձևակերպում պիտի ստանա կոնֆլիկտի հանգուցալուծման խնդիրը, եթե այն հանձնվի գիտության ու գիտնականի իրավասությանը: Բայց իրականությունը այլ է: Գիտությունը և գիտնականը չեն կոնֆլիկտների կարգավորման գործնական հարցերով զբաղվող առաջին պատասխանատուները: Միջազգային կոնֆլիկտների, այդ թվում և միջազգայինի վերաճած էթնոքաղաքական կոնֆլիկտների կարգավորման հարցերը վաղուց հանձնված են գերտերությունների և նրանց մասնակցությամբ ձևավորված միջազգային կազմակերպությունների իրավասությանը:

1. Կոնֆլիկտները գերտերությունների ու գլոբալ ուժային կենտրոնների դիտակետից. իմացական սև և սպիտակ տեխնոլոգիաներ

Միջազգային հարաբերությունների գլխավոր սուբյեկտներին՝ պետություններին և առաջին հերթին խոշոր տերություններին, կոնֆլիկտները երևում են իրենց շահերի դիտակետից և հենց այդ առումով են դառնում արտաքին քաղաքական գերատեսչությունների ու դրանց համակարգում գործող վերլուծական ու փորձագիտական հաստատությունների ուսումնասիրության առարկան: Մենք խոսում ենք ակնհայտ ու անվիճելի մի երևույթի մասին, որը ընդհանրական բնույթ է ձեռք բերել նաև այն պատճառով, որ գլոբալացված աշխարհի քարտեզի վրա գործնականորեն չկա որևէ կետ, որը դուրս լինի պերմանենտ մրցակցության մեջ գտնվող խոշոր տերությունների և նրանց կողմից գլխավորվող կենտրոնների քաղաքական հետաքրքրությունների կամ անմիջական ազդեցության ոլորտից: Հակամարտ կողմերի բոլոր փաստարկները (քաղաքական, մշակութային, պատմական, իրավական) սովորաբար ուղղակի անտեսվում են կոնֆլիկտների կարգավորումն «իրենց հովանու» տակ առած (իրականում իրենց հսկողության ու կառավարման տակ վերցրած) գլոբալ դերակատարների՝ գերտերությունների ու համաշխարհային ուժային կենտրոնների կողմից կամ ստորադասվում ու հարմարեցվում են նրանց շահերին: Եվ դա բոլորին հայտնի **կոնֆլիկտի քաղաքականացում** երևույթի իմաստն է:

Այսպիսին է իրողությունը, և այն քաղաքագիտական ու փիլիսոփայական բնույթի բազմաթիվ հարցեր է հարուցում: Իմացության փիլիսոփայության տեսակետից սկզբունքային նշանակություն է ձեռք բերում քաղաքական խոսույթում ճշմարտության, նրանում գիտականության չափանիշների հարցը: Իր «մյուս երեսով» նույն հարցն այն մասին է, թե իմացական ինչ գործողություններով, փաստարկման ինչ հնարքներով է ճշմարտությունը դուրս մղվում բանակցային գործընթացից, ինչպես է այն փոխարինվում տարբեր ձևերով փաթեթավորված կեղծիքով, կիսաճշմարիտ կամ ճշմարտանման հիմնավորումներով ու կոնֆլիկտի խեղված կերպարներով³:

³ Իմացության փիլիսոփայության տեսակետից հնարքների իմաստը հեռացումն է ճշմարտությունից, այսինքն՝ դեպի այն տանող ճանապարհի խճողումն ու քողարկումն է, որով զբաղվում են թե կոնֆլիկտի քաղաքականացմամբ շահագրգռված միջնորդներն ու երրորդ երկրները, թե կոնֆլիկտում անարդար նպատակներ հետապնդող կողմերը: Հնարքների այդ զինանոցը նրանից օգտվողներին չի տրվում որպես

Խոսքը ճշմարտության խեղաթուրման, նրա այլափոխման **խնացական սև տեխնոլոգիաների մասին է**, որոնցով զբաղված են խոշոր տերությունների արտաքին քաղաքական ուղեգիծը մշակող վերլուծական ծառայությունները՝ յուրօրինակ այն լաբորատորիաները, որոնց խնդիրը կոնֆլիկտների կարգավորման այնպիսի լուծումների որոնումն է, որոնք պետք է համապատասխանեն պատվիրատուի աշխարհաքաղաքական շահերին կամ առնվազն չհակասեն դրանց: Ստեղծել կոնֆլիկտի այնպիսի կերպար, նրա կարգավորման գործընթացում ներդնել դիվանագիտական, քարոզչական, բանակցային այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք միտված կլինեն կոնֆլիկտի հանգուցալուծմանը, սառեցմանը կամ հետագա սաստկացմանը, նայած թե այդ տարբերակներից որ մեկն է շահեկան կոնֆլիկտն իր կառավարման տակ վերցրած պետության համար. այսպիսին է այն առաջադրանքը, որ կատարում են պետության քաղաքական գիծը մշակող փորձագիտական խմբերը:

2. Իրավունքի անխուսափելիությունը

Վերն արված դիտարկումները կատարված են քաղաքական ռեալիզմի հայեցակարգի ոգով, որին հետևողները, Թուկիտիդեսից մինչև Մորգենթաու միջազգային հարաբերությունների սուբյեկտներ են համարում պետությունները, իսկ դրանց ծավալման շարժիչը՝ նրանց շահերը, որ պաշտպանվում են ուժով: «Ուժն է ծնում իրավունք» հայտնի արտահայտությունը այդ հայեցակարգի խտացված բանաձևն է: Քաղաքական ռեալիզմի ընդդիմախոսները՝ լիբերալ իդեալիստական հայեցակարգի տեսաբանները, չհերքելով ուժի գործոնի դերը միջազգային հարաբերություններում և մասնավորապես միջազգային կոնֆլիկտների հանգուցալուծման գործընթացներում, շեշտում են հետմոդեռնի միջազգային հարաբերություններում նոր սերնդի սուբյեկտների (միջազգային կազմակերպությունների, վերազգային ֆինանսատնտեսական կորպորացիաների և այլն) ի հայտ գալը և նրանց կողմից միջազգային հարաբերությունների ավանդական սուբյեկտների՝ պետությունների գործառույթների սահմանափակումը: Քաղաքական ռեալիզմի տեսաբանները դրան կարող են հակադարձել այնուամենայնիվ, թե միջազգային հարաբերություններում պետությունների մենաշնորհային դիրքի սասանումը թվացյալ է, թե նրանք իրենց դիրքերը զիջել են «միջազգային դաշտի ծայրագավառներում»՝ իրենց ձեռքում պահելով գլոբալ քաղաքական գործընթացների լծակները:

Երկու հայեցակարգերի բանավեճի առանցքային թեմաներից մեկը միջազգային կոնֆլիկտների կարգավորման գործընթացներում իրավունքի ու բարոյականության տեղի ու դերի հարցն է: Հասկանալի է, որ ուժի գործոնին որոշիչ դեր հատկացնող քաղաքական ռեալիզմի ներկայացուցիչները թերահավատությամբ են նայում իրավունքի՝ որպես կոնֆլիկտների կար-

կանխապես հայտնի ու պատրաստի մի բան: Ամեն մի առանձին դեպքում պահանջվում է դրանք մշակել կամ արդեն հայտնի հնարքները հարմարեցնել կոնֆլիկտային կոնկրետ իրադրությանը: Դա, ինչպես նշվեց, կատարում են հատուկ փորձագիտական խմբերը, վերլուծական հաստատությունները: Նման աշխատանքը պահանջում է կոնֆլիկտի պատմության, նրա իրավական ու մշակութային, հոգեբանական չափումների խորը իմացություն, բայց ոչ թե խնդրի արդարացի լուծմանը դրանք ծառայեցնելու, այլ կոնֆլիկտը ի շահ պատվիրատուի կարգավորելու, նրանից հնարավորինս շատ օգուտներ քաղելու համար:

գավորման մեխանիզմի ներունակությանը: Դրա համար նրանք, անկասկած, որոշակի հիմքեր ունեն: Միջազգային ամենահեղինակավոր կազմակերպությունները հիմնված են պետությունների կողմից: Հաճախ պետություններն են ներպետական ու միջազգային հարթակներում հիմնում իրենց ցուցանակով ոչ կառավարական, իսկ իրականում՝ նրանց նախագծերն իրագործող կազմակերպություններ: Այն, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամները վետոյի իրավունքով օժտված գերտերություններն են, արդեն իսկ հզոր փաստարկ է հօգուտ միջազգային հարաբերություններում ուժի գործոնի մասին քաղաքական ռեալիզմի տեսակետի:

Սակայն ամեն ինչ այնպես միանշանակ չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Միջազգային հարաբերությունների փորձը հաստատում է, որ իրավունքը չի կարող դուրս մղվել գլոբալ քաղաքականության դաշտից, կոնֆլիկտների կարգավորման գործընթացներից: Համոզվելու համար բավական են ստորև բերվող հետևյալ երկու փաստարկները:

Առաջին: Չնայած միջազգային կոնֆլիկտների կարգավորման վճռորոշ շարժառիթները քաղաքական բնույթ ունեն, դրանց հանգուցալուծման վերջնարդյունքները ձևակերպվում են իրավական փաստաթղթերում՝ առավելապես պայմանագրերում ու համաձայնագրերում: Իրավունքն է տրամադրում այն գործիքները, այն սկզբունքներն ու լեզուն, որոնցում հանգրվանում է կոնֆլիկտի լուծումը:

Երկրորդ: Ուժը որպես կոնֆլիկտի կարգավորման գործիք չի կատարում «Սահման քաջաց՝ զենն յուրյանց» ավանդական բանաձևով ներկայացվող իր դերակատարությունը բոլոր այն դեպքերում, երբ հակամարտող կողմերը հավասար գոր են: Իրադրությունը փոխվել է հատկապես միջուկային զենքի հայտնագործությունից հետո, երբ հզորների միջև ցանկացած պատերազմ հաղթանակ չի խոստանում ոչ մեկին ու կարող է կործանարար հետևանքներ ունենալ ոչ միայն կողմերի, այլև ողջ մարդկության համար: «Ուժն է ծնում իրավունքը» կամ «Իրավունքը թույլին պարտադրված ուժեղի կամքն է» բանաձևերը, որ մինչմիջուկային դարաշրջանում ճիշտ էին բնութագրում իրավունքի տեղը միջազգային հարաբերություններում, կորցրել են այն բացարձակ իմաստը, որ նրանք ունեին սովորական (ոչ միջուկային) սպառազինությունների պայմաններում: Միջուկային զենքը փոխել է սովորական սպառազինությունների դարաշրջանին հատուկ ուժային (ան)հավասարակշռության իմաստը, և գերտերությունները ստիպված են հաշվի նստել դրա հետ: Նրանք աշխատում են խուսափել բաց առձակատումից և իրենց «հաշիվները պարզել» երրորդ երկրներում ծագած կոնֆլիկտներում (ինչպես դա այժմ արվում է Սիրայում և Ուկրաինայում) կամ, չհատելով միջուկային առձակատման շեմը, միմյանց դեմ գործադրել ճնշման այլևայլ միջոցներ, որ կան հիբրիդային պատերազմի զինանոցում (պատժամիջոցներ, մեկուսացում, տեղեկատվական, տնտեսական ու ֆինանսական հարվածներ և այլն):

«Միջուկային հավասարագործության» պայմաններում բաց առձակատումից խուսափելու հրամայականը օբյեկտիվորեն պահանջարկված է դարձնում միջազգային իրավունքի վրա հենված ուժի գործադրման, վերահսկե-

լի «խաղի կանոնների» և դրանց հետևող միջազգային կազմակերպությունների առկայությունը⁴:

Նշված հանգամանքերի բերումով իրավունքն այլևս անշրջանցելի է գլոբալ քաղաքական (այդ թվում և հակամարտությունների կարգավորման) գործընթացներում:

3. Ղարաբաղյան հիմնախնդիրը իրավունքի եռաչափ դաշտում

Մեր դիտարկման թեման Ղարաբաղյան հակամարտությունն է, և մեր խնդիրը իրավունքի հետ հիմնախնդրի առնչությունների պարզաբանումն է: **Արցախ-Ադրբեջան** կոնֆլիկտն ունի հարյուրամյա պատմություն: Այն բորբոքվել է 1918 թ., երբ տարածաշրջանում առաջին անգամ քաղաքական ասպարեզ է իջել **Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն (ԱԴՀ)** անունով պետական մի նորագոյացություն, որը թուրքերի թելադրանքով տարածքային անհիմն պահանջներ ներկայացրեց հարևան պետություններին: Տարածքային այդ հավակնությունների թիրախ էր նաև Լեռնային Ղարաբաղը, որն արդեն իրեն հռչակել էր Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս: **Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան** հիմնախնդիրը ժամանակագրորեն դրանից առաջ չէր կարող լինել ոչ միայն այն պատճառով, որ մինչ այդ Ռուսական կայսրության ներսում գտնվող Անդրկովկասում չկար ոչ **Ադրբեջան** անունով տարածք, ոչ այդ անունով պետական կազմավորում, ոչ էլ այդ էթնոնիմը կրող ժողովուրդ:

1918 թվականից՝ խամաճիկային ԱԴՀ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ նկրտումներով սկսված կոնֆլիկտը առանց ընդհատումների՝ լատենտ ու բացահայտ ձևերով շարունակվել է միմյանց հաջորդած և միմյանցից տարբեր այն իրավաքաղաքական պայմաններում, որոնցում հայտնվել են տարածաշրջանը և հակամարտ կողմերը 1918-ից ի վեր: Ահա այդ պատմության գլխավոր փուլերը՝ իրավաքաղաքական միջավայրի փոփոխության տեսակետից:

1918-1920 թթ.:

Կոնֆլիկտն ընթացել է Ռուսաստանյան կայսրության փլուզմանը հաջորդած խառնակ տարիներին, երբ Արցախը զինված պայքարում դիմազրավել է երկրամասը նվաճելու օսմանյան թուրքերի ու **կովկասյան թաթարներ** անունն ստացած տեղի թուրքերի փորձերին⁵: Այդ տարիներին է հիմնախնդիրը հայտնվել Ազգերի լիգայի օրակարգում:

4 Պատահական չէ, որ դեռևս XX դարի քսանականներին նոր աշխարհամարտի համընդհանուր վտանգը կանխելու գիտակցումը դարձավ Ազգերի լիգա հիմնելու և Բրիտան-Քելոգի դաշնագրի ընդունման (1928 թ.) գլխավոր քաղաքական շարժառիթը, դաշնագիր, որի տակ իրենց ստորագրությունները դրած պետությունները պարտավորվեցին չդիմել ուժի գործադրմանը և իրենց միջև ծագած հարցերը լուծել քաղաքական միջոցներով: Ինչպես հայտնի է, դաշնագիրը չդիմացավ պատմության քննությանը. Գերմանիան՝ այն ստորագրած պետություններից մեկը, 1939-ին սանձազերծեց նոր համաշխարհային պատերազմ: Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո միջուկային գործոնի առկայությունը անխուսափելի դարձրեց ՄԱԿ-ի հիմնադրումը և միջազգային իրավունքի նոր համակարգի ընդունումը սրա հիմնադիր ու հետո նաև անդամ-պետությունների կողմից:

5 Անդրկովկասից թուրքերի դուրս գալուց հետո տեղի թուրքերի նկրտումներին նպաստում էին Բաքու մտած անգլիացիները:

1920–1921 թթ.:

Անդրկովկասի խորհրդայնացմամբ կոնֆլիկտը մտնում է նոր իրավաքաղաքական տարածություն: Անդրկովկաս վերադարձած բոլշևիկյան Ռուսաստանը, գործարքի մեջ մտնելով քեմալական Թուրքիայի հետ, 1921 թ. արդեն Խորհրդային Հայաստանի մաս հայտարարված Լեռնային Ղարաբաղը բռնությամբ մտցնում է Խորհրդային Ադրբեջանի սահմանները որպես լայն իրավունքներով օժտված ինքնավարություն:

1921–1991 թթ.:

Արցախը չի դադարեցնում մայր Հայաստանի հետ միավորվելու պայքարը: Մոսկվա ուղարկված զանգվածային ստորագրահավաքների փաստաթղթերը ապացույցն են այն բանի, որ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի կազմ մտցնելու հարցում էստոպել (լռելյայն համաձայնություն) չի եղել: Պայքարը բաց տեսք է ընդունում 1988-ին, որը 1991-ին բերում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակմանը:

1992 թվականից մինչ օրս:

Միջազգային գինված առճակատման բնույթ ստացած կոնֆլիկտի կարգավորումը գտնվում է ԵԱՀԿ հովանու ներքո:

Հիմնախնդրի պատմության այս սեղմագիրը պայմանավորում է նրա իրավական հիմքերի քննարկման որոշակի այուժե: Պահանջվում է կոնֆլիկտին առնչվող իրավական բաղադրիչ պարունակող փաստաթղթերի դասակարգման որոշակի սկզբունք:

Նպատակահարմար է իրավական հիմքերի այդ «մեծ փաթեթի» առաջին բաժնով առանձնացնել այն փաստաթղթերը, որ ընդունել են կողմերը առանձին-առանձին կամ համատեղ: Այդ փաթեթում կարող են տեղ գրավել նաև իրավասու երրորդ կողմ(եր)ի միջնորդությամբ կամ պարտադրանքով ընդունված փաստաթղթերը: Ղարաբաղյան հակամարտության դեպքում այդպիսին են իրավական հետևանքներ հարուցած այն փաստաթղթերը, որոնք ընդունվել են ԽՍՀՄ-ի՝ որպես դաշնային պետության, իրավասու մարմինների կողմից: Սրանք այն փաստաթղթերն են, որ մենք կանվանենք կոնֆլիկտի սեփական հիմքեր:

Հիմնախնդրի իրավական «մեծ փաթեթի» մյուս ենթաբաժնում կարող են տեղ գրավել միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված կամ որպես կոնֆլիկտի կարգավորման առաջարկություններ ներկայացված փաստաթղթերը՝ Ազգերի լիգայից մինչև ԵԱՀԿ⁶ և ՄԱԿ:

Վերլուծության հաջորդ հանգրվանը պետք է լինի այն, թե միջազգային իրավունքի որ սկզբունքների շրջանակում է քննարկվում հակամարտության կարգավորման հարցը, ինչ չափով են դրանց համապատասխանում քննարկվող փաստաթղթերը և թե աշխարհաքաղաքական ինչ շարժառիթներով է հակամարտությունը հայտնվել կարգավորման իրավական այն ձևաչափում, որում այն գտնվում է այժմ:

6 Գործնականորեն Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը բանակցային գործընթացի կազմակերպման ու կարգավորման առաջարկությունների մշակման իմաստով հանձնված է ԵԱՀԿ կողմից ձևավորած Սինսկի խմբին, որին տրամադրվել է համապատասխան մանդատ:

Իրավունքի հետ հիմնախնդրի՝ մեր կողմից վերը առանձնացված առնչությունները բխում են միջազգային հակամարտությունների կարգավորման պրակտիկայից ու տրամաբանությունից, որոնք հաստատում ու հուշում են, որ հակամարտությունների կարգավորմանը կողմերն ու միջնորդները սովորաբար «ներգրավում են», մի կողմից՝ բուն հիմնախնդրի իրավական հիմքերը և, մյուս կողմից՝ միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը: Միով բանիվ, նման կարգի միջազգային կոնֆլիկտների կարգավորման իրավական գործիքակազմը բաղկացած է «երկու հարկից»՝ բուն հիմնախնդրի հետ կապված իրավական փաստաթղթերից և միջազգային իրավունքի սկզբունքներից ու նորմերից:

Առաջին դեպքում կողմերը (եթե միջնորդները պահպանում են չեզոք կեցվածք և որդեգրում նրանց միջև երկխոսության կազմակերպման ու դրա համար հարմար միջավայրի ապահովման դերը) ստիպված են դիմել պատմությանը՝ հիմնախնդրի կապակցությամբ նախկինում ընդունված իրավական փաստաթղթերը գնահատելու, իրավական փաթեթը ձևավորելու և բանակցային գործընթաց բերելու համար⁷: Հիմնախնդրի իրավական փաթեթի ձևավորումն, այսպիսով, անհրաժեշտաբար ենթադրում է նրա «իրավական պատմության» ներբերումը բանակցային գործընթաց, եթե, իհարկե, այդպիսին կա: Ղարաբաղյան հակամարտությունը միջազգային զինված հակամարտություն է, շոշափում է ոչ միայն ինքնորոշման խնդիր, այլև այնպիսի տարածքի հարց, որն ունի նախընթաց կարգավիճակների մի մեծ պատմություն՝ սկսած անտիկ պատմիչների վկայություններից մինչև Գյուլիստանի պայմանագիր ու խորհրդային ժամանակներ:

Սակայն հազիվ թե, օրինակ, իմաստ ունի Խաչենի իշխանության կամ Խանսայի մելիքությունների հետ կապված փաստաթղթերին անդրադառնալ, երբ այդ դարերում, ինչպես արդեն նշվեց, Անդրկովկասում ոչ Ադրբեջան անունը կրող տարածք է եղել, ոչ Ադրբեջան անունով պետական կազմավորում, ոչ **ադրբեջանցի** անունն ունեցող մարդկանց հանրություն: Բնական է, չի եղել նաև մերօրյա իմաստով Ղարաբաղյան կոնֆլիկտ:

Այն հարցին, թե պատմությունը ինչ խորությամբ կարող է ներգրավվել հակամարտության կարգավորման բանակցային գործընթաց, մենք անդրադարձել ենք խնդրին նվիրված մի վերլուծությամբ⁸, որտեղ տարածաշրջանի մեծ պատմությունից **կոնֆլիկտի նախապատմություն և կոնֆլիկտի բուն պատմություն** կամ՝ **կոնֆլիկտի սեփական պատմություն** հասկացությունների տարանջատման գաղափարի համատեքստում հիմնավորել ենք այն մոտեցումը, որ Ղարաբաղյան հիմնախնդրի իրավական փաթեթում կարող են տեղ գրավել հակամարտության բուն (կամ՝ սեփական) պատմության փաստերն ու այդ ընթացքում կողմերի առանձին կամ համատեղ ընդունած իրավական ծանրաբեռնվածություն ունեցող փաստաթղթերը⁹:

7 Ընդ որում իրավական ուժ ունեցող պայմանագրերին, համաձայնագրերին, օրենքներին ու սկզբունքներին դիմելիս պետք է առաջնորդվել «օրենքը հետադարձ ուժ չունի» պահանջով:

8 Տե՛ս **Մանասյան Ա.Ս.**, Պատմական փաստարկները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում, «21-րդ դար», «Նորավանք» հրատ., N 4, 2017, 17-46 էջ:

9 **Կոնֆլիկտի նախապատմությանը** մենք վերագրել ենք տարածաշրջանի և նրա ժողովուրդների պատմության այն շրջանը, որը սկսվում է Անդրկովկասը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց մինչև 1917-1918 թվականները: Դա մի շրջան է, երբ կայսրությունը առաջ էր տանում Արևելյան Անդրկովկասի **իրանազերծման քաղաքականությունը** և որպես այդ քաղաքականության հենարան ընտրել էր Պարս-

Հավաք ու գրեթե սպառիչ ձևով այդ փաստաթղթերը տեղ են գտել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆ. Յուրի Բարսեղովի խմբագրությամբ 2008-ին Մոսկվայում հրատարակված փաստաթղթերի երկհատորյա ժողովածուի առաջին հատորում¹⁰ (երկրորդ հատորը նվիրված է դրանց մեկնաբանություններին): Ժողովածուն ընդգրկել է խնդրին վերաբերվող 842 փաստաթուղթ՝ սկսած Արցախի մասին անտիկ պատմիչների վկայություններից մինչև 2007 թվականը: Ժամանակագրորեն միջազգային իրավական բնույթի վերջին փաստաթուղթը 1994 թ. ապրիլին ԱԴՀ երկրների ղեկավարների կողմից ընդունված՝ կազմակերպության անդամ-պետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության պահպանման մասին հռչակագիրն է:

Այդ փաստաթղթերի մի զգալի մասը պատմաքաղաքական անգնահատելի նշանակություն ունի և լույս է սփռում հիմնախնդրի փաստական հենքի վրա, առանց որի անհնար է ըմբռնել նրա իրավական կողմը, որը հենց մեր դիտարկման թեման է: Սույն հոդվածի վերնագրում թեմայի վերլուծությանը կանխահղված տեսակետը պարտավորեցնում է փաստաթղթերի ու փաստերի այդ վիթխարի զանգվածում մատնանշել իրավունքի առումով առավել նշանակալիցները, առանձնացնել նրանց իրավական բաղադրիչը, գնահատել դրանց տեղն ու դերը հակամարտության կարգավորման մյուս բաղադրիչների համակարգում, արձանագրել դրանցից բխող իրավաքաղաքական եզրակացությունները¹¹ և վերջապես դիտարկել դրանք կողմերի և միջնորդների մոտեցումների համատեքստում:

կաստանի ու պարսիկների դեմ թշնամաբար տրամադրված տեղի թուրքերի ոչ մեծաքանակ համայնքին, որոնց նա «սկրտեց» **կովկասյան թաթարներ** անունով, համալրեց Պարսկաստանից երկրամաս թափանցող էթնիկապես տարախառն մահմեդականներով և նրանց տրամադրեց սոցիալական արդարության ու պետական անկայության տեսականներին հետամուտ հայերի դեմ: XX դարի շեմին, 1905-1906 թվականներին, արդեն թուրքական քաղաքական կողմորոշում ձեռք բերած և հակահայկական մոլուցքով համակված այդ զանգվածին կայսրությունը սաղորեց հայության դեմ՝ հրահրելով հայ-թաթարական բախումներ և թիկունքից սատարելով թաթարներին:

Արցախի մեկիբրությունների զինված առձակատումները արշավանքներով տարածաշրջան մտնող զանազան քոչվոր ցեղախմբերի հետ մինչև երկրամասը ռուսական տիրապետության տակ անցնելը, ինչպես նաև արդեն կայսրության սահմաններում ողջ Արևելյան Անդրկովկասով մեկ հայ-թաթարական բախումները իրենց աշխարհագրությամբ, առարկայով, Ղարաբաղյան հակամարտություն չեն կարող կոչվել և այդպիսին չեն եղել իրենց բովանդակությամբ: Դրանք էթնիկական կոնֆլիկտներ են եղել այդ հասկացության դասական իմաստով: Միայն 1917-1918 թվականներից, երբ տարածաշրջանը դուրս է մտնում Ռուսաստանյան կայսրության սահմաններից ու տիրապետությունից, կովկասյան թաթարների ու հայերի կոնֆլիկտը դառնում է կոնֆլիկտ տարածաշրջանի պետական, քաղաքական կազմակերպման խնդրի շուրջ: Էթնիկական կոնֆլիկտը վերածում է էթնոքաղաքական կոնֆլիկտի, որին նախ իրենց միջամտությունն են ցուցաբերում թուրքերը, իսկ հետո նաև Անդրկովկաս վերադարձած բոլշևիկյան Ռուսաստանը: Հակամարտության սեփական պատմությունը ներառում է հենց այն շրջանը, երբ այն փոխում է իր բնույթը և առարկան, երբ նույն պետության ներսում ծավալվող էթնիկական բախումները նոր աշխարհաքաղաքական միջավայրում վերածում են այդ պետության տիրապետությունից դուրս ծավալվող էթնոքաղաքական կոնֆլիկտի: Դա տեղի է ունեցել այն ժամանակ, երբ Ռուսաստանյան կայսրության տապալման ու թուրքական ներխուժման արդյունքում առաջին անգամ տարածաշրջանում հայտնվում է բնիկ հայկական տարածքներին (դրանց թվում և Արցախին) հավակնող Ադրբեջան անունով պետական կազմավորում: Հենց 1918 թվականից էլ սկսվում է մինչ օրս շարունակվող Ղարաբաղյան հակամարտության սեփական պատմությունը: 1918-ից առաջ տարածաշրջանում որևէ կոնֆլիկտ, որ կարող էր կրել **Ղարաբաղյան կոնֆլիկտ** անվանումը չկար և չէր կարող լինել:

10 Տե՛ս «Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии». Т. 1, М., 2008:

11 Առաջին մոտարկմամբ նման մի փորձ մենք արդեն ձեռնարկել ենք «Карабахский конфликт: международно признанные основания проблемы: папка основных правовых и политических документов» (Степанакерт, 2007) գրքում: Սակայն այստեղ մեր խնդիրը ոչ թե փաստաթղթերի տեքստերի հրատարակումն է, այլ, ինչպես նշվեց, դրանցում պարունակվող և դրանցից բխող իրավական եզրակացությունների և արդեն տասնամյակների պատմություն ունեցող կոնֆլիկտի կարգավորման գործընթացի հետ կապի դիտարկումը:

4. Արցախ-Ադրբեջան կոնֆլիկտի իրավական բաղադրիչները. հիմնախնդրի առանցքային փաստաթղթերի փաթեթը

Եվ այսպես, Արցախ-Ադրբեջան կոնֆլիկտի բուն (կամ՝ սեփական) պատմությունը ընդգրկում է 1918 թվականից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: Այն սկսվում է Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերի կողմից Գյանջայում և ապա Բաքվում առկա օրինական իշխանությունների տապալումով, քաղաքի **ավելի քան 30 հազար հայ խաղաղ բնակչության սպանողով** և Պարսկաստանի հյուսիսարևմտյան երկրամասի **Ադրբեջան** անվան սեփականումով պետական նորագոյացության՝ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության (հետայսու՝ ԱԴՀ) հիմնադրումով: Արտաքին ռազմական միջամտությամբ առաջին անգամ ասպարեզում հայտնված **Ադրբեջան** անունով պետական կազմավորումը հիմնվել է Հայոց ցեղասպանության՝ օսմանյան Թուրքիայի որդեգրած նույն քաղաքական ուղեգծի վրա¹²: Ռուսաստանյան կայսրության շրջանում հայատյացության ու հայկական ջարդերի դպրոց անցած կովկասյան թաթարները պատրաստ էին այդ վարքը որդեգրելուն: Մասնավանդ՝ հսկայածավալ էին տարածքային պահանջները, որ ներկայացվեցին իր պատմական հողերի վրա ինքնիշխանությունը վերականգնող Հայաստանի Հանրապետությանը¹³: Բաքուն այլ հայկական հողերի հետ մեկտեղ հավակնում էր Լեռնային Ղարաբաղին: Այդ անհիմն հավակնություններն իրավունքի հիմքի վրա մերժելու առաջին փաստաթղթերը ընդունվեցին հենց Արցախում, որտեղ 1918-1920 թթ. կայացած Արցախի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների (հետայսու՝ ԱԱԼՆ) համագումարները մեկը մյուսի հետևից մերժել են Բաքվին ենթարկվելու նախ թուրքական բանակի հրամանատար Նուրի փաշայի և ապա նրա կողմից հիմնած ԱԴՀ կառավարության պահանջներն ու վերջնագրերը և Արցախը հռչակել նորանկախ Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս: Ստորև փաստաթղթերի թվարկման փաթեթում մենք դրանք առանձնացնում ենք որպես Արցախ-Ադրբեջան կոնֆլիկտին վերաբերվող իրավական փաթեթի առաջնային փաստաթղթեր:

Ա. Արցախի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների (ԱԱԼՆ) համագումարների որոշումները Լեռնային Ղարաբաղը (Արցախը) Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս ճանաչելու մասին:

Այս որոշումների կապակցությամբ պետք է ընդգծվեն իրավունքի տեսակետից կարևոր հետևյալ մանրամասները: ԱԱԼՆ առաջին համագումարը երկրամասը Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս է հռչակել նախքան թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավումը և այնտեղ իշխանությունը կովկասյան թաթարների ձեռքը տալը, այսինքն՝ այն ժամանակ, երբ դեռ այսպես կոչված ԱԴՀ-ն (կամ ինչպես հաճախ են այդ գոյացությունը անվանում՝ մուսավաթական Ադրբեջանը) չէր դարձել լիարժեք քաղա-

12 Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2003.

13 1919 թ. Ադրբեջանը Ազգերի լիգա ներկայացրեց Բաքվից մինչև Բաթում ձգվող անհիմն տարածքային հավակնությունների մի քարտեզ և ստացավ Լիգա մտնելու իր դիմումի մերժումը:

քական իրողություն: Նույն հաստատականությամբ 1918–1920 թթ. ԱԴՀ գոյության 19 ամիսներին արցախահայության համագումարները մերժել են մուսավաթական Ադրբեջանին ենթարկվելու անգլիացիների հարկադրանքները:

Համագումարների այդ շարքում հատուկ է 1920 թվականի ապրիլի վերջին օրերին կայացած ԱԱԼՆ IX համագումարը: Այն տեղի է ունեցել Բաքվում Խորհրդային Ռուսաստանի XI կարմիր բանակի կողմից խորհրդային իշխանության հաստատման և Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (հետայսու՝ Ադր. ԽՍՀ) հռչակման օրերին: ԱԱԼՆ IX համագումարը որոշել է՝

«1. Չեղյալ հայտարարել արցախահայության 7-րդ համագումարի անուհից Ադրբեջանի կառավարության հետ կնքված ժամանակավոր համաձայնությունը¹⁴՝ ելնելով այն բանից, որ այն խախտվել է Ադրբեջանի զորքերի կողմից Շուշիում և գյուղերում հայ բնակչության դեմ կազմակերպված հարձակմամբ:

2. Հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը որպես նրա անբաժան մաս:

3. Խնդրել Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը Մոսկվայում՝ համագումարի որոշման մասին հայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը¹⁵:

Արցախահայության իններորդ համագումարը նախապես մերժել է Ադր. ԽՍՀ կազմ մտնելու հնարավոր առաջարկներն ու համաձայնություն տալու հարկադրանքները, որ կանխատեսելի էին կապված Ռուսաստանի XI Կարմիր բանակի կողմից Բաքվում խորհրդային իշխանության հաստատման հետ: Տարածաշրջանի խորհրդայնացումը և նոր հասարակական-քաղաքական կարգի հաստատումը չէր կարող փոխել արցախահայության կամքի արտահայտման լեգիտիմությունը, քանի որ (ի տարբերություն թուրքական սվիններով Բաքվում իշխանության եկած ԱԴՀ իշխանությունների) 1918–1920 թվականներին դե ֆակտո անկախ Արցախի բարձրագույն իշխանությունները եղել են լեգիտիմ:

14 Շրջափակման և ծայրահեղ ծանր տնտեսական պայմաններում Արցախահայության VII համագումարը Անգլիայի ճնշման տակ ԱԴՀ կառավարության հետ ստորագրեց ժամանակավոր համաձայնագիր, որով համագումարը տալիս էր ԱԴՀ սահմաններում ժամանակավորապես գտնվելու (մինչև Փարիզում տեղի ունենալիք Խաղաղության վեհաժողովը, որը պետք է հանրագումարի բերելը Առաջին աշխարհամարտի արդյունքները) իր համաձայնությունը՝ պայմանով, որ ադրբեջանական կողմը դադարեցնի Արցախի դեմ ուղղված իր ռազմական գործողությունները: Արցախահայության համագումարները շարունակում են իրենց գործունեությունը և իրենք են բնորոշում անգլիացիների կողմից նշանակված գեներալ-սահանգապետին կից գործող մահմեդականներից ու հայերից բաղկացած վեց հոգանոց խորհրդի երեք անդամներին: Ժամանակավոր համաձայնագրով մուսավաթական Ադրբեջանի կառավարությունն, ինչպես դա ակնհայտ էր, պայմանագրային հարաբերությունների մեջ մտավ Արցախի բարձրագույն իշխանությունների հետ և պարտավորվեց իր զինվորական ստորաբաժանումների տեղաշարժի դեպքում նախապես տեղյակ պահել հայկական կողմին: Համաձայնագիրը իր իրավական ուժը կորցրեց ոչ միայն 1920 թ. մարտին Շուշիի ու հարևան հայկական գյուղերում մուսավաթականների կողմից կազմակերպված հայկական ջարդերով, այլ նաև այն դարձյալ իրավական բնույթ ունեցող փաստի բերումով, որ մարտյան դեպքերից մեկ ամիս անց առանց իրավահաջորդի պատմության թատերաբեմը լքեց ԱԴՀ-ն: ԱԱԼՆ VII համագումարի կողմից կնքված ժամանակավոր համաձայնագիրը գործնական բնույթի որևէ իրավական հետևանք չունեցավ: Կոնֆլիկտի իրավական պատմության մեջ դրա միակ արդյունքն այն էր, որ ԱԴՀ-ն պայմանագրային հարաբերությունների մեջ է մտել Արցախի լեգիտիմ իշխանությունների հետ:

15 Տե՛ս՝ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, g. 1, գ. 581, թ. 98:

Բ. 1920 թ. օգոստոսի 10-ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՌԽՍՀ) կառավարության միջև կնքված համաձայնագիր¹⁶

Սա այն փաստաթղթերից մեկն է, որը հաստատում է, որ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի կազմ է մտցվել բուլշևիկյան Մոսկվայի կամայական որոշմամբ ու Հայաստանի վրա գործադրած ճնշումով: Համաձայնագիրը ստորագրվել է Սևրի պայմանագրի կնքման օրը և Խորհրդային Ռուսաստանի յուրօրինակ պատասխանն է եղել արևմտյան տերություններին: Փաստաթուղթը իր 3-րդ կետով անդրադառնում է նաև արդեն խորհրդայնացված Ադրբեջանի և դեռևս ոչ խորհրդային Հայաստանի Հանրապետության միջև առկա տարածքային հարցերին և արձանագրում, որ դրանք կկարգավորվեն «...հաշտության պայմանագրով, որը մոտակա ապագայում կկնքվի ՌԽՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև»: Համաձայնագրի հիշատակված դրույթը իրավունքի տեսակետից կարևոր է նրանով, որ այսպես կոչված վիճելի տարածքների հարցը պիտի լուծվեր Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք պայմանագրով: Ադրբեջանի՝ որպես այդ պայմանագրի կողմի մասին 1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագրում խոսք չկար: Այդ պայմանագիրը 1920 թ. հոկտեմբերի 28-ին նախաստորագրվել է Երևանում հենց հիշյալ երկու կողմերի միջև առանց Ադրբեջանի մասնակցության¹⁷, քանի որ Խորհրդային Ռուսաստանը այդ ընթացքում խորհրդայնացված Ադրբեջանը չէր դիտում որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտ¹⁸:

Եվ այսպես՝ Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև 1920 թ. հոկտեմբերի 28-ին նախաստորագրված պայմանագրի գլխավոր իրավական դրույթն այն է, որ վիճելի տարածքների հարցը պիտի լուծվեր Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքվելիք պայմանագրով:

Գ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման կապակցությամբ Ադրիեդկոմի հայտարարությունը (1920 թ. դեկտեմբերի 2)¹⁹

Այս հայտարարությունը, ինչպես այն 1920 թ. դեկտեմբերի 2-ին հրապարակվել է Բաքվում Ադրիեդկոմի կողմից, իրավունքի տեսակետից հստակ, տարընթերցումներ բացառող ընդունված փաստաթղթերից մեկն է: Նրա շուրջ ծավալված բանավեճերը կապված են այն բանի հետ, որ նախորդ օրը՝ դեկտեմբերի 1-ին, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը նվիրված Բաքվի Սովետի հանդիսավոր նիստում Ադր. ԽՍՀ կառա-

16 Стн ЦИГА РА, Ф 200, оп. 1, д. 581, л. 262. Заверенная копия. Машинопись. («Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, N 3): Համաձայնագրի մեջբերված հատվածի թարգմանությունը ռուսերենից մերն է՝ Ա.Մ.: Ընթերցողը փաստաթղթի ամբողջական տեքստին կարող է ծանոթանալ նաև «Բանբեր Հայաստանի արխիվների» 1967 թ., N 3-ից, որտեղ այն հրապարակված է:

17 Стн ЦИГА РА, ф. 200, оп. 1, д. 632. л. 1-5. Копия. Машинопись.

18 Նախաստորագրված պայմանագրի երրորդ հոդվածում այդ մասին ասվում է ուղիղ տեքստով. «Հայաստանի և Ռուսաստանի Խորհրդային Դաշնության կազմի մեջ մտնող Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ընդգծումը մերն է - Ա.Մ.) միջև պետական սահմանը որոշվելու է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ներկայացուցիչների խորհրդածողովում ՌԽՍՀ ներկայացուցչի մասնակցությամբ» ձևակերպումը հաստատում է, որ 1920 թ. հոկտեմբերին Մոսկվան Ադրբեջանը դիտում էր որպես իր կազմի մեջ մտնող սոցիալիստական հանրապետություն»:

19 Стн «Коммунист», газета, Баку, 2 декабря 1920 г.

վարության անունից Նարինան Նարինանովը կարդացել է հայտարարության մի տեքստ, իսկ հաջորդ օրը հրապարակվել է այլ տեքստ: Գիշերը փոխվել է հայտարարության՝ Լեռնային Ղարաբաղին վերաբերվող դրույթը: Նիստին ներկա գտնված բոլշևիկյան հայտնի քաղաքական գործիչ Սերգո Օրջոնիկիձեն ելույթով ողջունել է Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս ճանաչելու Ադր. ԽՍՀ որոշումը, որի մասին մեկ օր առաջ հեռագրով հայտնվել է Խորհրդային Հայաստանի կառավարությանը²⁰: Օրջոնիկիձեն այդ մասին հաղորդել է Մոսկվա, և Ստալինը հենց այդ բովանդակությամբ «Да здравствует Советская Армения» վերտառությամբ հաղորդագրություն է տպագրել «Правда» թերթի դեկտեմբերի 5-ի համարում:

Ադրբեջանական կողմը հղում է կատարում միայն հայտարարության՝ հանդիսավոր նիստից հետո փոխված և հաջորդ օրը հրապարակած տարբերակին, որով Խորհրդային Ադրբեջանը Նախիջևանը և Զանգեզուրը ճանաչում է որպես Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս և ճանաչում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ և լիիրավ ինքնորոշման իրավունքը:

Ընտին թվով փաստաթղթերի «խմբագրումը» Բաքվի քաղաքական մշակույթում դարձել է սովորական երևույթ: Այս փաստաթուղթն էլ չի խուսափել այդ ճակատագրից: Հանդիսավոր նիստին ներկա Սերգո Օրջոնիկիձեն իր ելույթում կրկնել է Նարինանովի ասածը և այդ մասին հրապարակել իր հոդվածների ու ելույթների երկհատորյակում²¹: Բաքուն պնդում է, թե Նարինանովը նման բան չի ասել, հակառակ այն բանին, որ Նախիջևանը ՀԽՍՀ անկապտելի մաս ճանաչելու մասին ընդամենը մեկ օր առաջ Բաքուն հեռագիր է հղել Երևան: Մեր օրերում այն տպագրվում է փոփոխված տեքստով՝ Նախիջևանին վերաբերվող մասը բաց թողնելով կամ փոխարինելով բազմակետով²²: Բայց նույնիսկ Ադրիեդկումի հայտարարության փոխված և 1920 թ. դեկտեմբերի 2-ին հրապարակված տարբերակն ունի մինչ օրս իրենց կարևորությունը պահպանող իրավական դրույթներ: Ավելորդ է ասել, որ այդպիսին է հայտարարության Նախիջևանին վերաբերող մասը, որով Բաքուն այն ճանաչում է Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս: Ինչ վերաբերվում է Լեռնային Ղարաբաղին, ապա պաշտոնական Բաքվի կողմից հայկական երկրամասի ժողովրդի լիիրավ ինքնորոշման իրավունքի ճանաչման ակտը այդ հայտարարության փաստով այլևս չի կարող անտեսվել կամ դուրս թողնվել Ղարաբաղյան հիմնախնդրի իրավական փաթեթից:

Գ. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողկոմխորհի հռչակագիրը Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս հայտարարելու մասին²³

ՀՄԽՀ Ժողկոմխորհը «Խորհրդային Հայաստան» թերթի հունիսի 19-ի համարում հրապարակած հռչակագրով Լեռնային Ղարաբաղը Խորհրդային

20 Հեռագրի տեքստը տպագրվել է Երևանում, «Կոմունիստ» (հայերեն) թերթի դեկտեմբերի 7-ի համարում:
21 Տե՛ս **Орджоникидзе Г.К.** Статьи и речи. В 2-х томах. М., 1956. Т. 1, с. 140:

22 Տե՛ս Из истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925. Документы и материалы. Баку, 1989, с. 67:

23 «Բարեր Հայաստանի արխիվներ», 1989, N 1, փաստաթուղթ N 23, էջ 126:

Հայաստանի անկապտելի մաս է հայտարարել հենվելով Ադրիեդկոմի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հռչակագրի ու երկու համրապետությունների կառավարությունների միջև ձեռք բերված համաձայնության վրա: Անհասկանալի պատճառներով հռչակագրում հղում չի կատարվում ոչ Կովբյուրոյի պլենումի հունիսի 3-ի՝ քաղաքական ընթացիկ իրադրության տեսակետից կարևոր որոշմանը, որը պարտավորեցնում էր հայկական կառավարությանը հատուկ հռչակագրով Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի մաս հայտարարել և ոչ էլ մանավանդ՝ երկրամասը Հայաստանի անկապտելի մաս համարելու մասին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բազմիցս բարձրաձայնված կամարտահայտությանը, որ արձանագրված է արցախահայտության լիազոր ներկայացուցիչների համագումարների որոշումներում: ՀՍԽՀ Ժողովուրդների հռչակագրում հիշատակված հիմնավորումներով հայկական կողմը հարցի լուծումը կախման մեջ դրեց Ադրբեջանի համաձայնությունից, որն անկասկած քաղաքական անփորձությամբ պիտի բացատրվի: Սակայն անկախ այդ վրիպումներից՝ հռչակագրի օրինականությունը կասկածի ենթակա չէ, և այն հիմնախնդրի իրավական փաթեթի կարևոր փաստաթղթերից է:

Ե. Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կովկասյան բյուրոյի (Կովբյուրոյի) 1921 թ. հուլիսի 4-ի²⁴ և 5-ի²⁵ որոշումները

Խորհրդային տարիներին Մոսկվան և Բաքուն այս որոշումները համարել են իրավական իմաստով լիարժեք փաստաթղթեր, չնայած երրորդ երկրի՝ Խորհրդային Ռուսաստանի, կուսակցական, ոչ սահմանադրական մարմինը Ռուսաստանի իսկ կողմից այդ ժամանակ ինքնիշխան դիտվող երկու պետությունների սահմանների ու տարածքային հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու որևէ իրավասություն կամ լիազորություն չէր կարող ունենալ և չի ունեցել: Կովբյուրոյի նիստերը ժամանակագրորեն տեղի են ունեցել այն բանից հետո, երբ Բաքուն 1920 թ. հռչակագրով ձանաչել էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի լիիրավ ինքնորոշման իրավունքը, իսկ Խորհրդային Հայաստանը 1921 թ. հունիսի 12-ին Լեռնային Ղարաբաղը հռչակել էր Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս: Արդեն սպառված հարցը Կովբյուրոյի արտահերթ պլենումի օրակարգ մտցնելը ակնհայտորեն բոլշևիկյան Մոսկվայի նախաձեռնությունն էր, ինչի մասին է վկայում պլենումի նիստերին կենտրոնի ներկայացուցիչ Ստալինի անակնկալ հայտնվելը:

Պլենումի արձանագրությունների վերլուծությունը հաստատում է նաև ոչ իրավական բնույթի, բայց կարևոր երկու իրողություն: Նախ՝ այն, որ հուլիսի 4-ին Ստալինին չի հաջողվել անցկացնել Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ-ին հանձնելու Մոսկվայից բերված նախագիծը: Մյուս կողմից՝ այդ արձանագրությունները բացահայտում են նաև հայ գործիչների անփորձությունը՝ նման բարդ բանակցային իրավիճակներում կողմնորոշվե-

24 Հուլիսի 4-ի որոշումը տես՝ ЦПА ИМЛ ф. 64, оп. 2, д. 1 л. 118. Վավերացված պատճենը հրապարակված է «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրի 1989 թ. 2-րդ համարում, էջ 76-77.

25 Հուլիսի 5-ի որոշումը տես՝ РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 1, л. 124: Վավերացված պատճենը հրապարակված է «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրի 1989 թ. 2-րդ համարում, էջ 77-78.

լու հարցում²⁶: Հուլիսի 4-ին Կովբյուրոյի կայացրած հայանպաստ որոշումը (այստեղ մենք անտեսում ենք այն, որ Կովբյուրոն նման հարց քննարկելու որևէ իրավասություն ընդհանրապես չուներ) ընդունելի չէր բոլշևիկյան Մոսկվայի համար, որը Ստալինին Թբիլիսի էր ուղարկել արդեն Խորհրդային Հայաստանի մաս հռչակված Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ սահմանները մտցնելու վճիռ կայացնելու համար: Հուլիսի 4-ի նիստի վերջում Նարիմանովը իր անհամաձայնությունն է հայտնում ընդունված որոշման հետ և պահանջում հարցը տեղափոխել կուսակցության Կենտկոմ: Սակայն ՌԿ(Բ)Կ Կենտկոմը Կովբյուրոյին էր թողել խնդրի լուծումը, որպեսզի Լեռնային Ղարաբաղի բռնակցումը անմիջապես չկապվի Մոսկվայի հետ: Ահա թե ինչու Ստալինը մնում է տեղում և հաջորդ օրը հրավիրում Կովբյուրոյի նոր նիստ՝ Նարիմանովի պահանջով հարցը վերաքննարկելու համար: Նոր քննարկում ըստ էության տեղի չի ունենում²⁷: Ստալինը քննարկման չի դնում ըստ երևույթին իր իսկ ձեռքով գրված (նկատելի է նման տեքստերի շարադրման Ստալինին հատուկ ոճը) որոշումը: Ավելին, ի տարբերություն նախորդ նիստի որոշման՝ նախագիծը չի դրվում նաև քվեարկության, այլ որպես Կենտրոնի տեսակետ ընդունված է համարվում: Կովբյուրոյի իրավասությանը վերաբերվող վերը նշված վերապահումներով հանդերձ պետք է նկատել, որ առանց ընթացակարգային խախտումների ընդունված պետք է համարվի հուլիսի 4-ի որոշումը:

Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի «որոշումը», այսպիսով, օժտված չէ իրավագործությամբ ոչ միայն այն պատճառով, որ ՌԿ(Բ)Կ Կովբյուրոն ինքը չուներ Խորհրդային Ռուսաստանի սահմաններից դուրս այլ պետությունների տարածքներին վերաբերվող հարցեր լուծելու իրավասություն, այլև այն պարզ պատճառով, որ այդ «որոշումը» ուղղակի չի դրվել քվեարկության և չի ընդունվել²⁸, ինչպես պահանջում էր ընթացակարգը, այլ Մոսկվայի ու Բաքվի կողմից ուղղակի համարվել է ընդունված (Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, ճիշտ է, կրավորական կեցվածքով, բայց իր անհամաձայնությունն է հայտնել այդ «որոշման» հետ, չհամարձակվելով դեմ դուրս գալ Կենտրոնին և չպահանջելով, որ հարցը տեղափախվի ՌԿ(Բ)Կ Կենտկոմ):

ՌԿ(Բ)Կ Կովբյուրոյի կողմից չընդունված այդ «որոշումը» խորհրդային տարիներին եղել է Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ սահմանները մտցնելու միակ «հիմքը»: Ակնհայտ է, որ այն ոչ մի առումով օրինական դիտվել չի կարող: Տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղի բռնակցման հակաիրավական

26 Այդ անփորձության բնորոշ դրսևորում էր, օրինակ, այն, որ Մյասնիկյանը չբողոքարկեց խնդիրը «Ղարաբաղյան հարց» ձևակերպումով օրակարգ մտցնելը, երբ պետք է քննարկվեր միայն Լեռնային Ղարաբաղի հարցը: «Ղարաբաղյան հարց» ձևակերպումը թույլ տվեց Նարիմանովին քվեարկության դնել ողջ Ղարաբաղին (Լեռնային Ղարաբաղին և Գաշտային Ղարաբաղին) վերաբերվող «Ղարաբաղը թողնել Խորհրդային Ադրբեջանի կազմում» առաջարկություն, երբ Լեռնային Ղարաբաղից դուրս գտնվող տարածքների մասին վիճի ենթակա հարց ընդհանրապես չկար, և Հայաստանը չէր հավակնում Գաշտային Ղարաբաղին (հաճախ օրտագործվում էին նաև Վերին Ղարաբաղ և Ներքին Ղարաբաղ անունները):

27 Ըստ երևույթին գիշերը Ստալինին չի հաջողվում այնպես ոլորել Կովբյուրոյի անդամների ձեռքերը, որ նրանք քննարկումով ու հիմնավորումներով կայացնեն նոր որոշում:

28 Բաքուն այս հարցում ևս հավատարիմ է մնում հետին թվով փաստաթղթերի «խմբագրման» իր «մշակույթին»: 1989 թ. հրատարակված “Из истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. Документы и материалы” (Баку, 1989) փաստաթղթերի ժողովածուն իր 92-րդ էջում գետնեղել է այդ «որոշման» տեքստը՝ լրացված քվեարկության արդյունքների մասին կեղծ տողով: Իբրև թե Կովբյուրոյի 4 անդամ քվեարկել են «կողմ», իսկ 3-ը մնացել են «ձեռնպահ»: Կեղծարարները նույնիսկ չեն նկատել, որ քվեարկությամբ ներկա են եղել Կովբյուրոյի 8, այլ ոչ թե 7 անդամ:

ակտ: Այնուամենայնիվ, Ղարաբաղյան հիմնախնդրի իրավական փաթեթում այն պետք է ներգրավվի որպես ապացույց այն բանի, որ հենց իրավունքի ոտնահարումով և օկուպացմամբ է բնիկ հայկական երկրամասը խորհրդային տարիներին հայտնվել Ադր. ԽՍՀ սահմաններում: Կովբյուրոյի կողմից չընդունված, սակայն գործողության մեջ դրված «որոշումը» Լեռնային Ղարաբաղի բռնազավթման ակտն ապացուցող փաստաթուղթ է: Սա է նրա տեղը և դերը հիմնախնդրի իրավական բաղադրիչների համակարգում:

Իր հակաիրավական բնույթով հանդերձ փաստաթուղթը պարունակում է կարևոր տեղեկություններ այն մասին, թե իրավաքաղաքական ինչ իրողություններից են ելել 20-րդ դարի 20-ական թվականներին Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի մասին որոշումներ ընդունող պետական ու կուսակցական գործիչները: Դրանք ցույց են տալիս այդ ժամանակների հետևյալ իրողությունները:

ա) **Ադրբեջանական ժողովուրդը** հասկացություն այդ տարիներին չի եղել և չի շրջանառվել: Հուլիսի 5-ի «որոշումը» գործողության մեջ է դրվել ողջ Ադր. ԽՍՀ-ում հավաք ու ցրիվ ապրող «հայերի ու մուսուլմանների միջև ազգային խաղաղության հաստատման անհրաժեշտությունից ելնելով»: Կովբյուրոն գրեթե բաց տեքստով արձանագրում է, որ Արևելյան Անդրկովկասի՝ Ադր. ԽՍՀ-ի սահմաններում հայտնված տարածքների ազգային պետական կառուցվածքի շուրջ կոնֆլիկտի կողմերը հայերն ու մուսուլմաններն են, որ Ադր. ԽՍՀ-ն նրանց ընդհանուր պետականությունն է: 1988-ին, հայերի սումգայիթյան սպանդից մեկ օր առաջ, ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը արցախցիներին ու ադրբեջանցիներին հիշեցրել է, որ նրանք Ադրբեջանում ոչ թե կողք-կողքի են ապրում, այլ իրար մեջ: 1991 թ. Ստեփանակերտի վրա ինքնաթիռից թափված թռուցիկներում Բաքուն հայերին հիշեցրել է նույն այն փաստը, որ Ադրբեջանը երկու ժողովուրդների «ընդհանուր հողն է»:

բ) Խորհրդային Ադրբեջանը չի հիմնվել որպես խորհրդային տիպի ազգային պետություն, որպիսին եղել են մնացած բոլոր խորհրդային հանրապետությունները: Այն հիմնվել է որպես նոր տիպի ինտերնացիոնալ, ոչ ազգային, արտազգային հանրապետություն, որը մինչև երեսունական թվականները չի ունեցել տիտղոսակիր ազգ (սովորաբար տեքստերը գրվել են ռուսերենով և օգտագործվել է *интернациональная республика* բառակապակցությունը):

գ) Կովբյուրոյի կողմից ըստ էության չընդունված, բայց Մոսկվայի կողմից գործողության մեջ դրված որոշմամբ լայն իրավունքներով մարզային ինքնավարություն պետք է տրվեր **ողջ Լեռնային Ղարաբաղին**, այլ ոչ թե նրա մի մասին, ինչպես ի խախտումն այդ որոշման արվել է 1923-ին:

դ) Շուրջ 70 տարի այդ փաստաթղթին լռելյայն համաձանություն տալուց հետո. Բաքուն 1991 թ. նոյեմբերին որոշեց, որ արցախահայության լիիրավ ինքնորոշման իր իսկ կողմից ճանաչված իրավունքի հիման վրա լայն իրավունքներով ԼՂԻՄ ինքնավար մարզի կազմավորումը եղել է անօրինական և ընդունեց օրենք ԼՂ ինքնավար մարզը լուծարելու մասին²⁹:

²⁹ Փաստաթուղթը իրավական անհեթեթության փայլուն նմուշ է: Օրենքը լուծարում է արդեն գոյություն չունեցող ինքնավար մարզը, քանի որ նրա հիմքի վրա արդեն հռչակված էր Լեռնային Ղարաբաղի

2. Աղբրեջանի Խորհուրդների Կենտրոնական Գործադիր Կոմիտեի (ԱղբԿԳԿ) ղեկընտր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմավորման մասին³⁰

Բաքուն չշտապեց կատարել Կովբյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ տալու մասին: Ավելին, նա քայլեր էր ձեռնարկում, որպեսզի ընդհանրապես ինքնավար մարզ չձևավորվի: Թե՛ Կովբյուրոյի փաստաթղթերում, թե՛ մամուլում պաշտոնապես շրջանառվող ռուսալեզու նյութերում մարզի անունը ուղղակի մատնացույց էր անում, որ այն պետք է ներառի ողջ Լեռնային Ղարաբաղը³¹: Автономная Область Нагорного Карабаха (АОНК) – այսպիսին էր մարզի պաշտոնական անվանումը մինչև 1936 թ. ԽՍՀՄ նոր Սահմանադրության ընդունումը: Բաքվի խնդիրը Լեռնային Ղարաբաղի ապագա մարզի տարածքների ծվատումն էր՝ մարզը հնարավորինս սահմանափակ տարածքների վրա հիմնելու համար: Հենց դրա համար առաջ քաշվեց «Կարմիր Քրդստան» ստեղծելու գաղափարը³²: Ի վերջո մարզը հիմնելու հարցը շտապ լուծելու Կովբյուրոյի ու հետո նաև այդ հարցում նրա գործառույթները ստանձնած Անդրֆեդերացիայի ղեկավարության բազմաթիվ պահանջներից հետո 1923 թ. հունիսի 7-ին Բաքուն արցախահայությունից Կովբյուրոյի որոշմանը համաձայնություն ստանալու բազմաթիվ ձախողված փորձերից հետո հրապարակեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմավորման ղեկընտ: ԼՂԻՄ-ը ստեղծվեց այն տարածքների մի մասի վրա³³, որ մաս պետք է կազմեին հայկական ինքնավարության և դա արձանագրվեց ղեկընտի այն առաջին կետում, որում ասվում է՝ «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմավորել ինքնավար մարզը որպես Աղբ. ԽՍՀ բաղկացուցիչ մաս»: Կովբյուրոյի առանց այն էլ ապօրինի որոշման խախտումներով հրապարակված այդ ղեկընտն, այնուամենայնիվ, պարունակում է իրավական տեսակետից որոշ արժեքավոր դրույթներ:

Առաջին: Աղբ. ԿԳԿ ղեկընտում (ինչպես և Կովբյուրոյի «որոշման» մեջ), որևէ ակնարկ չկա այն մասին, թե իբր Լեռնային Ղարաբաղը Աղբրեջանի պատմական տարածքն է, ինչպես դա սկսեցին եռանդագին քարոզել Աղբրեջանական Հանրապետության նախագահները՝ հայր ու որդի Ալիևները:

Երկրորդ: Դեկրետի երրորդ կետը լրացված է հատուկ ծանոթագրությամբ, որտեղ նշվում է, որ «բոլոր արոտավայրերը, անտառները, այգիները և հողի փաստացի սեփականությունը պահպանվում է ի տիրապետություն ներկա սեփականատերերի»: Աված է պարզ. արցախցիներին իրենց պատկանող հողերով են մտցրել Աղբ. ԽՍՀ սահմանները:

Հանրապետությունը: Բացի այդ 1991 թ. նոյեմբերին դեռևս գործում էր ԽՍՀՄ Սահմանադրությունը, և Բաքուն իրավունք չուներ առանց Կենտրոնի համաձայնության այդպիսի որոշում ընդունել: Իմանալով այդ բոլորը, Բաքվում օրենքն ընդունեցին 1991 թ. նոյեմբերին, բայց հրապարակեցին 1992 թ. հունվարին:

30 Стен Сборник узаконений и распоряжений Рабоче-Крестьянского Правительства АССР за 1923 г., Баку, 1923 г., с. 384-385:

31 Մարզի հայկական անվանումը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ, աշխարհագրորեն նույնպես ողջ Լեռնային Ղարաբաղին վերաբերվող իմաստ ունի:

32 Ինչպես և սպասվում էր, այն մնաց թղթի վրա: Փոխարենը Քարվաճառի, Քաշաթաղի մերօրյա շրջանների տարածքները, որով մարզը սահմանակցում էր ՀԽՍՀ հետ, դուրս թողնվեցին մարզի սահմաններից: Նույն կերպ մարզի սահմաններից դուրս մնացին Կենտրոնական ու Հյուսիսային Արցախի տարածքները:

33 Բաքուն չսահմանափակվեց դրանով: Դրանից հետո Խորհրդային Միության տարիներին նա տարբեր ձևերով յուրացրել է Խորհրդային Հայաստանին ու ԼՂԻՄ-ին պատկանող տարածքներ: Այդ մասին տես՝ **Կարեն Խաչատրյան, Համո Սուքիասյան, Գեղամ Բաղայան**, Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Եր., 2015:

Է. Ադրբեջանի Խորհուրդների Կենտրոնական Գործադիր Կոմիտեի (ԱդրԿԳԿ) 1923 թ. հուլիսի դեկրետը «Պետական հիմնարկությունների ազգայնացման մասին»³⁴

Սա այն փաստաթղթերից մեկն է, որը հաստատում է, որ Ադր. ԽՍՀ-ն հիմնվել է որպես ոչ ազգային, ինտերնացիոնալ խորհրդային հանրապետություն: Դեկրետում բացակայում է «պետական լեզու» եզրույթը: Նշվում են այն հիմնարկությունները, որտեղ գործավարությունը պիտի տարվի թյուրքերենով՝ այն հիմնավորումով, որ դրանք ունեն ամենաշատ առնչությունները աշխատավոր գյուղացիության հետ: ԽՍՀՄ և ՌԽՍԴՀ հիմնարկների հետ հարաբերվելու լեզուն հայտարարվում է ռուսերենը, իսկ ԼՂԻՄ-ի հետ՝ հայերենը: Դեկրետը պարտավորեցնում է խորհրդային պետական բոլոր հիմնարկներին պատասխանել քաղաքացիների դիմումներին այն լեզվով, որով գրված է դիմումը: Դժվար չէ պատկերացնել, թե դա ինչ պիտի նշանակեր տասնյակ բնիկ ազգություններ ունեցող մի հանրապետության համար:

Սակայն այդ բոլորի մեջ մեր կողմից քննարկվող հարցի տեսակետից կարևոր է, որ դեկրետը հայերենն է հաստատում որպես ԼՂ ինքնավար մարզի հետ Ադր. ԽՍՀ պետական մարմինների հարաբերվելու լեզու: Դա հաստատումն է այն բանի, որ ինքնավար մարզը ստեղծվել է որպես պետականության ատրիբուտներով օժտված վարչաքաղաքական միավոր խորհրդային պետականությունների աստիճանակարգում և որպես այդպիսին ԽՍՀՄ կազմավորումից հետո եղել է նրա ազգային-պետական կառուցվածքի սուբյեկտներից մեկը՝ ներկայացված լինելով ոչ միայն Ադր. ԽՍՀ, այլև ԽՍՀՄ բարձրագույն օրենսդիր իշխանություններում: Ադր. ԽՍՀ ինտերնացիոնալ, ոչ ազգային բնույթը 1920-ական թվականներին ընգծվել է ամենատարբեր ձևերով: Ընդ որում անընդհատ նշվող և քարոզվող գաղափարները մեկը եղել է այն, որ ոչ ազգային Ադր.ԽՍՀ-ը փաստորեն մուսուլմանների ու հայերի «միասնական պետական միությունն է» (ձևակերպումը վերցված է Ադրբեջանի Խորհուրդների Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմավորման մասին դեկրետից): Այդ համատեքստում հասկանալի է դառնում նաև, թե ինչու է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության դրոշի վրա հանրապետության անվանումը գրվել երկու լեզուներով՝ թյուրքերեն ու հայերեն:

Ը. «Ժողովրդական պատգամավորների երկրամասային, մարզային Խորհուրդների, ինքնավար մարզերի և ինքնավար օկրուգների պատգամավորների Խորհուրդների հիմնական լիազորությունների մասին» ԽՍՀՄ օրենքը և «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության» օրենքը³⁵

1920-ական թվականներին Ադրբեջանի Խորհուրդների Կենտրոնական

34 Стѹ Собрание узаконений и распоряжений Рабоче-Крестьянского Правительства АССР за 1923 г., с. 399. Газ. «Бакинский рабочий», 1 августа 1923:

35 Стѹ «Закон Союза Советских Социалистических Республик об основных полномочиях краевых, областных Советов народных депутатов, Советов народных депутатов автономных областей и автономных округов (принят на третьей сессии Верховного Совета СССР десятого созыва 25 июня 1980 г.» М., 1980.

Գործադիր Կոմիտեի (Ադր. ԿԳԿ) կողմից «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմավորման մասին» դեկրետի հրապարակումից հետո հրապարակվել է նաև Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Սահմանադրությունը: Հայկական մարզի պետաիրավական կարգավիճակի մասին փաստաթուղթը հենց Սահմանադրություն է անվանվել, քանի որ մարզը հիմնվել է որպես խորհրդային պետականության ձև: Հայտնի է, օրինակ, որ 1920-ական թվականների Ադր. ԽՍՀ տարեկան բյուջեում Նախիջևանի ինքնավար Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը նշվում էին որպես խորհրդային պետական կազմավորումներ և առանձնացվում առանձին տողերով³⁶:

Հետագա տարիներին Բաքուն աշխատել է ոչ միայն տարածքներ պոկել մարզից, այլև զանազան ձևերով իջեցնել նրա իրավական կարգավիճակը: Սակայն նա նույնիսկ խիստ ցանկության դեպքում չէր կարող մարզից՝ որպես ԽՍՀՄ ազգային պետական կառույցի սուբյեկտից, խլել իրավական այն ատրիբուտները, որոնցով հայկական ինքնավարությունը օժտված էր ԽՍՀՄ Սահմանադրությամբ և «Ժողովրդական պատգամավորների երկրամասային, մարզային Խորհուրդների, ինքնավար մարզերի և ինքնավար օկրուգների պատգամավորների Խորհուրդների հիմնական լիազորությունների մասին» Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության օրենքով: Ահա թե ինչու 1981 թ. հրապարակված և 1986 թ. խմբագրված «Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» օրենքը փաստորեն կրկնում է խնդրի կապակցությամբ ԽՍՀՄ օրենքով ամրագրված դրույթները, որը իրավական հաստատումն էր այն բանի, որ ազգային ինքնավարությունները ԽՍՀՄ-ում սուկ վարչատարածքային կազմավորումներ չեն եղել և իրենց կարգավիճակով տարբեր են եղել ԽՍՀՄ վարչատարածքային միավորներից: Հենց այդ պատճառով էլ վերը նշված ԽՍՀՄ օրենքի հենց անվանման մեջ ինքնավար մարզերը չեն նույնացվում սովորական վարչատարածքային միավորներ հանդիսացող մարզերի հետ³⁷: Ինքնավար մարզերի սահմանների փոփոխության հարցում ԽՍՀՄ օրենքով ինքնավար մարզերը հավասարեցված էին միութենական հանրապետություններին: Հարցը պատկանում էր բացառապես ազգային ինքնավարության իրավասությանը՝ մի բան, որ պետության սուվերենության իրավական գլխավոր ատրիբուտներից մեկն է համարվում:

ԽՍՀՄ վերոհիշյալ օրենքը դարաբաղյան հիմնախնդրի իրավական հիմքերի թեմայի տեսակետից արժեքավոր փաստաթուղթ է նաև նրանով, որ այն ինքնավար կազմավորումների հետ առնչվող հարցերի դեպքում առաջնային կարգով հղում է կատարում ԽՍՀՄ և հետո միայն միութենական հանրապետությունների Սահմանադրություններին: «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» Ադր. ԽՍՀ օրենքը իրավական աստիճանակար-

36 Стн «Из истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР». Документы и материалы». Баку, 1989, с. 273:

37 Կուրսկի մարզի սահմանները, օրինակ, Մոսկվան կարող էր փոխել՝ հաշվի չառնելով նրա վարչական ղեկավարության կամ Ժողովրդական պատգամավորների Խորհրդի կարծիքը: Սակայն ինքնավար մարզերի սահմանները չէին կարող փոխվել առանց Ժողովրդական պատգամավորների մարզային Խորհրդի համաձայնության:

գույթյան ԽՍՀՄ-ում ընդունված կարգի համաձայն ուղղակի կրկնում է այն: Սա նշանակում է, որ ԼՂԻՄ-ի՝ որպես ազգային ինքնավար մարզի, պետաիրավական կարգավիճակը փաստորեն, ֆորմալ ու բովանդակային իմաստներով սահմանվել է ԽՍՀՄ, այլ ոչ թե Ադր. ԽՍՀ Սահմանադրությամբ ու օրենքներով: Ըստ երևույթին՝ միասնական բանակ, միասնական դրամական համակարգ, միասնական քաղաքացիություն, միասնական արտաքին սահման, միասնական քաղաքական կարգ ունեցող դաշնային այնպիսի պետության մեջ, որպիսին ԽՍՀՄ-ն էր, այլ կերպ հնարավոր էլ չէր³⁸: Միութենական հանրապետություններից այնքան հիմնարար գործառույթներ (իմա՝ իրավունքներ) էին օտարված, որ խորհրդային պետականությունների սանդղակում նրանք շատ քիչ բանով էին տարբերվում իրենց կազմի մեջ մտնող ազգային ինքնավարություններից: Բովանդակային առումով ամենամեծ տարբերությունը, թերևս այն էր, որ օժտված լինելով ԽՍՀՄ օրենսդիր իշխանություններում ներկայացված լինելու հավասար իրավունքով, նրանք Ազգությունների պալատում ներկայացված լինելու տարբեր քվոտաներ ունեին. միութենական հանրապետությունը ներկայացված էր 25, ինքնավար հանրապետությունը՝ 9, իսկ ինքնավար մարզը՝ 5 պատգամավորով: Այդքանը միայն: Սակայն «վերններում» այդ առավելությունն էլ հանգում էր ոչնչի, քանի որ բոլոր հարցերը նախապես լուծվում էին ԽՄԿԿ կենտկոմում, և երկրի օրենսդիր մարմնի կոմունիստ պատգամավորները պարտավոր էին Գերագույն Խորհրդում քվեարկել ԽՄԿԿ կենտկոմից բերված նախագծի օգտին:

Այսպիսով, ԽՍՀՄ գոյության տարիներին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պետաիրավական կարգավիճակին վերաբերվող փաստաթղթերի վերլուծությունը հաստատում է խնդրի իրավական հիմքերի տեսակետից երկու կարևոր փաստ:

Առաջին: 1921 թ. հուլիսի 5-ին Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) Կուսակցության կենտկոմի որոշմամբ և Խորհրդային Ռուսաստանի իրագործած հակաիրավական միջամտությամբ է Լեռնային Ղարաբաղը մտցվել Ադր. ԽՍՀ սահմանները³⁹: Եթե Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան վերնախավը նույնիսկ նվազագույն չափով առաջնորդվեր այդ տարիներին գործող միջազգային իրավունքի սկզբունքներով և չդիմեր բռնության, Ադրբեյջանը չէր կարող զավթել Լեռնային Ղարաբաղը:

Երկրորդ: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պետաիրավական կարգավիճակը սահմանվել է ԽՍՀՄ-ի՝ որպես խորհրդային տիպի դաշնային պետության, օրենքներով⁴⁰, ինչը հաստատում է, որ ԼՂԻՄ-ը ըստ էության

38 Նշվածին կարելի է հավելել նաև այն, որ ըստ ԽՍՀՄ օրենքների թե միութենական հանրապետությունների, թե ինքնավար կազմավորումների դատախազներին նշանակում էր Մոսկվան:

39 Հիշենք, որ Ստալինին այդպես էլ չի հաջողվել ստանալ Կովբյուրդի «օրինական» համաձայնությունը և իրավական ակտի տեսքի բերել այդ բռնագավթումը:

Ադր. ԽՍՀ օրենքները սուկ պատճենահանել են այն, ինչն այդ ինքնավարությունների կարգավիճակի վերաբերյալ ընդունվել է ԽՍՀՄ օրենքներով: Պատահական չէ, որ նախ՝ 1980 թ. ընդունվել է ԽՍՀՄ համապատասխան օրենքը, իսկ հետո միայն՝ 1981-ին՝ Լեռնային Ղարաբաղի մասին Ադր. ԽՍՀ օրենքը:

Կարևոր է նկատել, որ մարզի մասին Ադր. ԽՍՀ օրենքը մարզի իրավական կարգավիճակի, ԽՍՀՄ օրենսդիր մարմիններում ներկայացվածության մասին հողվածներում համապատասխան հղումով հենվում է ԽՍՀՄ Սահմանադրության վրա, արձանագրելով նրա իրավական գերակայությունը իր նկատմամբ:

40 Կարևոր է նկատել, որ ԼՂԻՄ-ի մասին Ադր. ԽՍՀ օրենքը մարզի իրավական կարգավիճակի, ԽՍՀՄ օրենսդիր մարմիններում նրա ներկայացվածության մասին հողվածներում համապատասխան հղումներով հենվում է ԽՍՀՄ Սահմանադրության վրա, արձանագրելով նրա իրավական առաջնությունն ու գերա-

յան եղել է դաշնային այդ պետության ազգային պետական կառույցի սուբյեկտ: Միութենական հանրապետությունների համամանությունամբ ԽՍՀՄ օրենքներով երաշխավորված ԼՂԻՄ սահմանների անձեռնմխելիությունը և ԽՍՀՄ օրենսդիր մարմիններում նրա ներկայացված լինելու փաստերը դրա գլխավոր ապացույցներն են⁴¹:

Թ. Ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային Խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի արտահերթ նիստի դիմումը Ադր. ԽՍՀ , ՀԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդներին քննարկելու և լուծելու Ինքնավար մարզը ԱդրխՍՀ կազմից ՀԽՍՀ կազմ տեղափոխելու հարցը⁴²

Ադրբեջանական քարոզչական մեքենան տարիներ շարունակ տարածում է այն միտքը, թե իբր մարզխորհրդի արտահերթ նիստը կատարել է հակաիրավական, հակասահմանադրական քայլ: Սակայն միջնորդագիրը կամ որոշումը, որն ընդամենը քաղաքակիրթ ձևով առաջակրում է քննարկել և դրականորեն լուծել իր կողմից բարձրացված հարցը, իրավունքի ոչ մի չափանիշով հակաիրավական կամ անթույլատրելի համարել հնարավոր չէ: Ընդամենը մեկ շաբաթ անց զուսպ և քաղաքական կոռեկտության ոգով գրված այդ դիմումի պատասխանը եղավ սունգայիթյան վանդալիզմը՝ խաղաղ հայ բնակչության ջարդը:

Սունգայիթյան ոճրագործությունը, դրան հաջորդած հայերի զանգվածային ջարդերը, մարզի ու հարակից Շահումյանի շրջանի շրջափակումը ցեղասպանություն էին այդ հասկացության միջազգայնորեն ընդունված իմաստով, և դրանից հետո Արցախի իշխանությունների ձեռնարկած բոլոր քայլերն ու նրանց կողմից ընդունված իրավական բնույթի բոլոր փաստաթղթերը չեն կարող քննարկվել մարդկության դեմ կատարված այդ հանցագործության համատեքստից դուրս:

Ժ. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության՝ «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում հատուկ կառավարում մտցնելու մասին» 1989 թ. հունվարի 12-ի հրամանագիրը⁴³ և ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում իրավիճակի նորմալացման մասին» 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշումը⁴⁴

ԽՍՀՄ Սահմանադրության և գործող օրենքների տեսակետից հատուկ կառավարման համակարգի ներդրումը ԼՂԻՄ-ում աննախադեպ ակտ էր: Չկար հատուկ կառավարման մասին ԽՍՀՄ օրենք: Բնական է, որ իրավունքի առումով այն բավարար չափով հիմնավորված ու նախապատրաստված չէր և ուներ ԽՍՀՄ Սահմանադրությանն ու օրենքներին ակնհայտորեն հակասող կողմեր: ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն 1991

կայությունը իր նկատմամբ:

41 Եթե դրան ավելացվի, որ միութենական հանրապետություններից օտարված էին սեփական բանակ, տարադրամ, քաղաքացիություն ունենալու, ՄԱԿ-ում ներկայացված լինելու (այս դեպքում բացառություն էին Ուկրաինան և Բելոռուսը) իրավունքները, պարզ կդառնա, թե որքան մոտ են եղել ԼՂԻՄ-ի և Ադր. ԽՍՀ պետական-իրավական կարգավիճակները ԽՍՀՄ միասնական պետության կազմում:

42 «Советский Карабах», Степанакерт, 21 февраля, 1988.

43 Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1990, N 15, с. 252.

44 ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի այդ որոշման մասին ՀԽՍՀ Գերագույն Խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհուրդը ընդունել են համատեղ որոշում, որում տրված է միութենական իշխանությունների որոշման գնահատականը: Տե՛ս <http://www.press.karabakh.info>

թ. նոյեմբերի 28-ի իր որոշման մեջ անդրադարձել է ԼՂԻՄ-ում Հատուկ կառավարում մտցնելու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության որոշմանը և արձանագրել, որ նախ՝ ԳԽ նախագահությունը երկրի որևէ տարածքում հատուկ կառավարում մտցնելու իրավասություն չունի և այնուհետև ուշադրություն է հրավիրել այն բանի վրա, որ ԽՍՀՄ ԳԽ Նախագահության իրավասության մեջ չէր մտնում երկրի որևէ տարածքում Խորհուրդների՝ որպես պետական իշխանության ձևի, գործունեության դադարեցումը: ԽՍՀՄ Սահմանադրության հետ Սահմանադրական վերահսկողության դատարանի կողմից արձանագրված այդ հակասությունները այնքան հիմնավոր են, որ ավելորդ են դարձնում նրա մանրամասների քննությունը:

Սակայն եթե մի կողմ թողնենք ԽՍՀՄ ԳԽ իրավասության խնդիրը և մարզում մտցված Հատուկ կառավարման համակարգը դիտարկենք իր գործադրման փաստական հետևանքների տեսակետից, ապա պետք է արձանագրվի, որ Ա. Վոլսկու կողմից գլխավորվող Հատուկ կառավարման կոմիտեն 1989 թ. ընթացքում ԼՂԻՄ-ը բոլոր առումներով դե ֆակտո դուրս է բերել Բաքվի ենթակայությունից: Բաքվի հետ հարաբերվելու՝ մարզի տնտեսական, քաղաքական, մշակութային բոլոր կապերը խզվեցին: Ողջ տնտեսությունը վերանթարկված էր Մոսկվային կամ Երևանին, կուսակցական կազմակերպությունը անմիջապես ենթարկվում էր ԽՄԿԿ կենտկոմին, արհմիությունները և մշակութային կազմակերպությունները՝ «տեղափոխվել էին» Հայկական ԽՍՀ: ԼՂԻՄ-ը 1989 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին դե ֆակտո դուրս էր բերված Ադրբեջանի ենթակայությունից:

Հատուկ կառավարման կոմիտեն ԼՂԻՄ-ում վերացվեց ԽՍՀՄ ԳԽ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում իրավիճակի նորմալացման մասին» 1989 թ. նոյեմբերի 28-ին ընդունված որոշմամբ: Որոշումը ելնում էր այն բանից, որ մարզում պետք է վերականգնվի Ժողովրդական պատգամավորների մարզային Խորհրդի ու նրա գործադիր կոմիտեի աշխատանքը: Թվում էր՝ գիտակցվել է խորհրդային իշխանությունը մարզում դադարեցնելու քայլի հակասահմանադրական բնույթը: Սակայն Կենտրոնը գնաց նոր հակասահմանադրական քայլի՝ որոշելով ԼՂԻՄ 20-րդ գումարման մարզ-խորհրդի գործունեության վերականգման փոխարեն ստեղծել մի նոր մարմին՝ «հանրապետական կազմկոմիտե» Վ. Պոլյանիչկոյի գլխավորությամբ: ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն տվել է նաև այդ որոշման իրավական գնահատականը և հանգել այն եզրակացությանը, որ այն իր մի շարք կետերով եղել է հակասահմանադրական: Մասնավորապես այդպիսին է դիտվել որոշման այն կետը, որով նախատեսվում էր մարզային իշխանության նոր մարմինների ձևավորման ընթացքում ելնել բնակչության ազգային կազմում հայերի ու ադրբեջանցիների հարաբերակցությունից՝ նրանց ներկայացվածությունը նոր ստեղծվող մարմիններում պահպանելու համար: Հանրապետական կազմկոմիտեի առջև հստակ խնդիրներ դրված չէին, ինչը հնարավորություն ստեղծեց, որ այն ըստ էության վերածվի պատժիչ գործողություններ իրագործող, իրավական դաշտից դուրս գործող մի մարմնի, որի հետ մարզի քաղաքական ուժերը ոչ մի կապի մեջ չմտան: ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն իր եզրա-

կացության մեջ արձանագրեց, որ Հանրապետական կազմկոմիտեն այդպես էլ չգործեց, իսկ ԽՍՀՄ ԳԽ որոշումը չիրագործվեց:

Այստեղ նշված փաստաթղթերի իրավական գնահատման հարցում մենք հատուկ ենք հղում կատարում հենց ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության դատարանի եզրակացություններին, քանի որ հենց միութենական այդ հաստատությունն է ըստ էության փաստել, որ խորհրդային տարիներին ԼՂԻՄ-ը իր վերջին դե ֆակտո կարգավիճակում դուրս բերված է եղել Ադր. ԽՍՀ ենթակայությունից, և դա իրավական այն կարևոր փաստն է, որ կապված է ԼՂԻՄ-ում հատուկ կառավարման համակարգ մտցնելու ու այն վերացնելու ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից ընդունված ակտերի հետ:

Ի. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը (1990 թ. ապրիլի 3)⁴⁵

Ինչպես 1936 թ., այնպես էլ 1977 թ. ԽՍՀՄ Սահմանադրությունները նախատեսում էին ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության ազատ դուրս գալու իրավունք: Մինչև Լեռնային Ղարաբաղի շուրջ կոնֆլիկտի ծավալումը, ոչ մեկի մտքով չէր անցնում, որ ո՛չ Սահմանադրությամբ, ո՛չ էլ որևէ օրենքով չի կանոնակարգվում ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու գործընթացը: 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը եկավ լցնելու իրավական այդ դատարկությունը: Օրենքը, որի օգտին քվեարկեցին ԽՍՀՄ ԳԽ բոլոր պատգամավորները, մասնավորապես նախատեսում էր, որ միութենական հանրապետությունը ԽՍՀՄ կազմից կարող է դուրս գալ ազգաբնակչության հանրաքվեի արդյունքների հիմքով: Ղարաբաղյան հիմնախնդրի էության ընթանման տեսակետից այս օրենքը պարունակում է սկզբունքային կարևորության դրույթ, որի շնորհիվ այն անպայման պետք է դասվի հիմնախնդրի իրավական փաթեթի առանցքային փաստաթղթերի շարքը: Խոսքն այն մասին է, որ միութենական հանրապետությունը ԽՍՀՄ կազմից դուրս գալու դեպքում չէր կարող իր հետ տանել իր կազմի մեջ մտնող այն ինքնավար կազմավորումներին ու հավաք ապրող ազգություններին, որոնք չեն ցանկանա նրա հետ մեկտեղ հեռանալ Խորհրդային Միությունից: Նման դեպքերում ԽՍՀՄ օրենքը նրանց իրավունք էր վերապահում ինքնուրույն որոշել իրենց կարգավիճակը՝ մնալ ԽՍՀ կազմում կամ որոշել իրենց ազգային պետական կարգավիճակը՝ ընդհուպ մինչև ինքնիշխան պետության հռչակումը: Նախապես հայտնի էր, թե ինչ որոշում պիտի ընդունեի Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (նախօրյակին նրա կազմի մեջ էր մտել այն ժամանակ դեռ հայաբնակ Շահումյանի շրջանը), եթե Ադր. ԽՍՀ-ը որոշեր դուրս գալ ԽՍՀՄ կազմից:

Իրավունքի տեսակետից այս փաստաթղթի գլխավոր արժեքն այն է, որ նա վերահաստատեց Ադր. ԽՍՀ 1920 թ. դեկտեմբերի 2-ի հռչակած և հետագայում մարզի ձևավորմամբ ամրագրված Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը, ԼՂԻՄ-ի՝ որպես ինքնորոշման սուբյեկտ լինելու փաստը: Ընդ որում, 1990-ի օրենքով այդ իրավունքը ճանաչվեց ոչ թե միայն

45 Ведомости Верховного Совета СССР, 1989, N 3, с. 14.

Խորհրդային Ադրբեջանի, ինչպես դա եղել է 1920 թվականին, այլև ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների կողմից (այդ օրենքով Ադր. ԽՍՀ-ը Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի սուբյեկտ լինելը ճանաչեց երրորդ անգամ): Եվ դա ԽՍՀՄ այդ օրենքով հիմնախնդրի համատեքստ բերած այն նորությունն է, որ այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը: Հետխորհրդային բոլոր այն նորանկախ պետությունները, որոնք համապատասխան միութենական հանրապետությունների իրավահաջորդներն են, Արցախի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը ճանաչել են 1990 թ. ապրիլին՝ «կողմ» քվեարկելով հիշյալ օրենքին:

Լ) «Պետական անկախության վերականգման մասին Ադրբեջանական Հանրապետության Գերագույն Խորհրդի» հռչակագիրը (30 օգոստոսի, 1991 թ.)⁴⁶ և «Պետական անկախության մասին Ադրբեջանական Հանրապետության Սահմանադրական ակտը» (18 հոկտեմբերի, 1991 թ.)⁴⁷

Անվանափոխված և «Ադրբեջանական Հանրապետություն» անունը շրջանառության մեջ դրած Խորհրդային Ադրբեջանը ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության վերականգման մասին» հռչակագիրը հրապարակեց 1991 թ. օգոստոսի 30-ին: Դա ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին իրավական ակտ էր: 48 օր անց, հոկտեմբերի 18-ին, հրապարակվեց ԽՍՀՄ-ը լքելու մասին օգոստոսի 30-ի հռչակագիրը մանրամասնող և իրավաբանական համապատասխան տեսքի բերված նոր փաստաթուղթ «Պետական անկախության մասին Ադրբեջանական Հանրապետության Սահմանադրական ակտ» վերնագրով: Հետագայում, երբ հայտնի դարձավ, որ այդ ակտից բխում են Ադրբեջանական Հանրապետության համար անցանկալի որոշ հետևանքներ, Բաքվի վերլուծաբանները սկսեցին պնդել, թե իբր Սահմանադրական ակտը ԽՍՀՄ-ից դուրս գալու որոշման մասին ակտ չէ, այլ ընդմենը այդ գործընթացը սկսելու մասին հայտարարություն: Սակայն ակտում նման գործընթաց սկսելու մտադրությունների կամ նախապատրաստության մասին որևէ պնդում կամ ձևակերպում չկա: Եթե այն լիներ ԽՍՀՄ-ից դուրս գալու գործընթաց սկսելու մասին փաստաթուղթ, կունենար իր նպատակին համապատասխանող բովանդակություն ու ոճ: Իրականում Բաքվում հրապարակված սահմանադրական ակտը ԽՍՀՄ-ից դուրս գալու գործընթացն ավարտված համարելու, կատարված փաստի մասին փաստաթուղթ է: Դա հասկանալի է դառնում Սահմանադրական ակտում Ադրբեջանի խորհրդայնացմանը տրված իրավական գնահատականից: Անկախության վերականգման մասին այդ փաստաթուղթը Ադրբեջանի խորհրդայնացումը դիտում է որպես Ադրբեջանի օկուպացում՝ Խորհրդային Ռուսաստանի կողմից: Կա, սակայն, մի նրբություն, որը սովորաբար դուրս է մնում մասնագետների աչքից: Բանն այն է, որ նույն 1991-ի մարտին, երբ Մ. Գորբաչովը համամիութենական հանրաքվեի էր դրել ԽՍՀՄ պահպանման հարցը, Խորհրդային Ադրբեջանը մասնակցել է դրան և ազգաբնակչության ճնշող մեծամասնության կամքով

46 «Бакинский рабочий», газета, 3 сентября, 1991 г.

47 «Бакинский рабочий», газета, 7 ноября, 1991 г.

«Այո» պատասխանել հարցին⁴⁸: ԽՍՀՄ կազմում մնալու ընդամենը չորս ամիս առաջ տրված «Այո»-ն պահանջում էր նոր հանրաքվեով ստանալ ԽՍՀՄ կազմից դուրս գալու համաձայնությունը: Բայց Բաքուն առանց ժողովրդի համաձայնության, մարտյան հանրաքվեի լույսի տակ, ժողովրդի կամքին հակառակ օգոստոսի 30-ին ընդունեց պետական անկախության վերականգման հռչակագիրը, իսկ հոկտեմբերի 18-ին այդ ակտին տվեց իրավաբանորեն ավարտուն տեսք:

Արցախ-Ադրբեջան կոնֆլիկտի էության համարժեք ընթանման տեսակետից Սահմանադրական ակտը կարևոր է այն առումով, որ, հաստատելով պետականության վերականգման մասին օգոստոսի 30-ի հռչակագրի ուղեգիծը, Բաքուն հրապարակավ հրաժարվեց Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից և իրեն հռչակեց 1918 թ. թուրքական բանակի կողմից հիմնված ԱԴՀ իրավահաջորդը:

ԽՍՀՄ-ից դուրս գալու և Խորհրդային Ադրբեջանի իրավական ու քաղաքական ժառանգությունից հրաժարվելու ակտի իրավական հետևանքներից կարևոր է ընդգծել այն, որ դրանով իսկ մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը իրեն գրկել է Նախիջևանում և Լեռնային Ղարաբաղում պետական իշխանություն իրագործելու նույնիսկ այն խախուտ հիմքերից, որ նրան տրամադրել էր Խորհրդային Ռուսաստանը և հետո ԽՍՀՄ-ը: Նախիջևանը Խորհրդային Ադրբեջանի հետ կապող միակ հիմքը 1921 թ. կնքված և ցայսօր գործող Կարսի պայմանագիրն է, որով արդեն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Նախիջևանի երկրամասը հանձնվել է Խորհրդային Ադրբեջանի հովանավորությանը (միայն հովանավորությանը, և ոչ ավելին): Լեռնային Ղարաբաղը (ողջ Լեռնային Ղարաբաղը, այլ ոչ թե նրա մի մասի վրա հիմնված ԼՂԻՄ-ը) Խորհրդային Ադրբեջանի սահմաններն է մտցվել Կովքյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի չընդունված, բայց գործադրված «որոշմամբ»: Ոչ Լեռնային Ղարաբաղը, ոչ էլ Նախիջևանը մաս չեն կազմել Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության, որն իր տարածքային անհիմն հավակնությունների պատճառով ստացել է Ազգերի լիգա ընդունվելու մերժումը և պատմության թատերաբեմը թողել է առանց ճանաչված կամ փաստորեն հաստատված սահմանների: Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու ակտը պարտադիր էր դարձնում, որ Սահմանադրական ակտում հատուկ հոդվածով հիմնավորում տրվի պետական անկախությունը վերականգնող Ադրբեջանական Հանրապետության տարածքների հարցին: Սահմանադրական ակտը իր 14-րդ հոդվածով անդրադառնում է հարցին՝ իրավական կոնկրետությունից ու բովանդակությունից դուրս անհեթեթ մի դրույթով այն մասին, որ պատմականորեն ձևավորված սահմաններում Ադրբեջանական Հանրապետության տարածքը անօտարելի ու անբաժանելի է: Փաստորեն Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարված Ադրբեջանական Հանրապետությունը 1991-ին անկախություն է վերականգնել առանց սահմաններ հռչակելու:

48 Հանրաքվեին մասնակցած հանրապետությունների բնակչության 76 տոկոսը քվեարկել է հօգուտ ԽՍՀՄ պահպանման: Տրված հարցին «Այո» է պատասխանել հանրաքվեին մասնակցած Ադր. ԽՍՀ քաղաքացիների 93,3 տոկոսը: Ըստ միութենական հանրապետությունների հանրաքվեի արդյունքների մասին տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/Всероссийный_референдум_о_сохранении_СССР: Խորհրդային Հայաստանը 1991-ի մարտի՝ ԽՍՀՄ պահպանման մասին հանրաքվեն բոյկոտել էր:

Արդեն հարյուր տարվա պատմություն ունեցող և ԽՍՀՄ-ի լուծարումից հետո միջազգային բնույթ ստացած Արցախ-Ադրբեջան կոնֆլիկտի իրավական հիմքերի մեր կողմից հիշատակված փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը իրավական որևէ հիմք ու փաստարկ չունի հայկական այն հողերի նկատմամբ, որոնցում այսօր պետական իշխանություն է իրականացնում Արցախի Հանրապետությունը: Հիմնախնդրի իրավական հիմքերի տեսակետից ոչ թե հայկական, այլ ադրբեջանական կողմն է օկուպացրել իրավունքի տեսակետից իրեն չպատկանող տարածքներ: Դա Հյուսիսային Արցախն է ու Նախիջևանը:

Հարյուրամյա հակամարտության իրավական հիմքերին վերաբերվող առանցքային փաստաթղթերի փաթեթի վերլուծությունը հաստատում է, որ նրանցում չկա որևէ իրավական հիմք, որով մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը կարող է հիմնավորել Արցախի նկատմամբ իր հավակնությունների օրինականությունը:

Ալեքսանդր Ս. Մանասյան – ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, ԵՊՀ: Գիտական հետաքրքրությունների ոլորտը՝ իմացության տեսություն, բնագիտության փիլիսոփայական հարցեր, կոնֆլիկտի փիլիսոփայություն: 1990-ական թվականներից ուսումնասիրում է Ղարաբաղյան հիմնախնդրի պատմա-քաղաքական, իրավական ու մշակութային-քաղաքակրթական տեսանկյունները: Այդ թեմայով գրված հարյուրից ավելի հոդվածների ու մի քանի գրքերի հեղինակ է, որ հրատարակվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, պարսկերեն լեզուներով:

Summary

ARTSAKH-AZERBAIJAN CONFLICT

Legal Components of the Problem

Aleksandr S. Manasyan

Key words – the Karabakh conflict, ethnopolitical conflict, own legal basis of the problem, the problem of the legality of the Republic of Azerbaijan, legitimacy of the Nagorno-Karabakh Republic.

A century has passed since the issue of the conflict between Nagorno-Karabakh and Azerbaijan was included in the international political agenda. The conflict began in 1918, when the Turkish army invaded Baku, removed the legitimate authorities and established Azerbaijan Democratic Republic (ADR). The latter made unreasonable territorial claims, including the historical province of Armenia Nagorno-Karabakh (NK). Before this conflict there was not and could not be such a conflict, since in Transcaucasia there was neither a state with the

name of Azerbaijan nor a people with such an ethnonym. First, with the support of the Turks, and then of the Englishmen who entered the region, ADR tried to subordinate NK by force. The problem took the form of an armed confrontation. Congresses of plenipotentiary representatives of NK population rejected these claims and declared NK as an integral part of the Republic of Armenia. A question that took the form of an international conflict was included in the agenda of the League of Nations. The struggle of the people of the NK for their reunion with Armenia was not pursued in the new geopolitical conditions, when the Bolshevik Russia returning to Transcaucasia forcibly included the NK in the borders of Soviet Azerbaijan with the status of broad autonomy. The Nagorno-Karabakh Autonomous Region was formed as a form of Soviet statehood. In the continuation of the uninterrupted struggle of the Artsakh Armenians in 1988, the Karabakh movement began to demand the reunion of the region with Soviet Armenia.

During the collapse of the Soviet Union, when the Republic of Azerbaijan (AD) adopted a Declaration on the Restoration of the State of the Democratic Republic of Azerbaijan (existed in 1918–1920) and refused to be the legal successor of Soviet Azerbaijan based on the laws of the USSR and the principles of international law, deputies of all levels of the Soviets of the Nagorno-Karabakh Autonomous District and the adjacent Armenian-populated Shaumyan district have proclaimed the independence of the Nagorno-Karabakh Republic (NKR).

Baku again took the strategy of a forceful solution of the problem. The conflict entered a new phase. The resolution of the problem, which took the form of an international armed conflict, turned out to be under the auspices of the OSCE.

The international experience in the settlement of such conflicts suggests that it is appropriate to divide the documents of the two types in the legal grounds of the problem by placing them in different packages. The first package may include documents on the problem, accepted by the parties to the conflict and recognized by the competent authorities for them.

The second package is the documents adopted by international institutions that have taken care of the settlement of the problem.

The first package documents are separated in the article as their own legal basis. The analysis of the article shows that there is no document in the legal grounds of the issue that could make the legitimate claims of the modern Azerbaijan towards Nagorno-Karabakh.

КОНФЛИКТ АРЦАХ–АЗЕРБАЙДЖАН

Правовые составляющие проблемы

Александр С. Манасян

Ключевые слова – Карабахский конфликт, этнополитический конфликт, собственные правовые основы проблемы, проблема легитимности Азербайджанской Республики, легитимность Нагорно–Карабахской Республики

Прошел век, как вопрос о конфликте между Нагорным Карабахом и Азербайджаном был включен в международно–политическую повестку. Конфликт начался в 1918 г., когда турецкая армия вторглась в Восточное Закавказье, устранила законные власти и обосновала Азербайджанскую Демократическую Республику (АДР), предъявившую необоснованные территориальные притязания, в том числе и на историческую провинцию Армении Арцах – Нагорный Карабах (НК). До этого конфликта в Закавказье не было ни государства с названием Азербайджан, ни народа с таким этнонимом. Сначала с поддержки турков, а потом и вошедших в регион англичан АДР пыталась силой подчинить себе НК. Проблема приняла форму вооруженного противостояния. Съезды полномочных представителей населения НК отклонили эти притязания и объявили НК неотъемлемой частью Республики Армения. Вопрос, принявший форму международного конфликта, был включен в повестку Лигии наций. Борьба народа НК за воссоединение родного края с Арменией не прекращалась и в новых геополитических условиях, когда вернувшаяся в Закавказье Советская Россия насильно включила НК в границы Советского Азербайджана со статусом широкой автономии. Нагорно–Карабахская автономная область была образована как форма советской государственности. В продолжении непрерывной борьбы армянства Арцаха в 1988 г. началось Карабахское движение с требованием воссоединения области с Советской Арменией. В ходе распада СССР, когда Азербайджанская Республика (АР) провозгласила о выходе из СССР, об отказе от правопреемства Советского Азербайджана и восстановлении государственности просуществовавшей в 1918–1920 гг. АДР, депутаты всех уровней Советов НКАО и сопредельного армянонаселенного Шаумяновского района, основываясь на законы СССР и принципы международного права, провозгласили независимость Нагорно–Карабахской Республики (НКР). Баку вновь встал на путь силового решения проблемы. Конфликт вошел в новую фазу. Разрешение проблемы, принявшей форму международного вооруженного конфликта, оказалось под эгидой ОБСЕ. Международный опыт урегулирования подобных конфликтов подсказывает, что в правовых основаниях проблемы целесообразно разделить друг от друга документы двух видов, разместив их в разные пакеты. К первому пакету могут быть отнесены документы по пробле-

ме, принятые сторонами конфликта и признанными ими правомочными инстанциями. Во второй пакет могут быть включены документы, принятые международными организациями, взявшими под свою эгиду разрешение конфликта. Правовые документы первого рода мы называем **собственными правовыми основаниями проблемы**. Прделанный в статье анализ документов первой папки показывает, что в них нет ни одного документа, который сделал бы законными притязания нынешней Азербайджанской Республики на Нагорный Карабах.

REFERENCES

1. Banber Hajastani arkhivneri, 1967 t., N 3. (In Armenian).
2. Hajeri kotoracnery Baqyum ev Elizawetpoli nahangum 1918–1920 tt. Pastatkheteri ev njuteri djokhovatsu. Yerevan, 2003. (In Armenian).
3. Iz istorii obrazovaniq Nagorno–Karabakhskoj avtonomnoj oblasti Azerbajdjanskoj SSR. 1918–1925. Dokumenty I materialy. Baku 1989. p. 67.
4. **Karen Khachatryan**, Hamo Suqiasyan, Gegham Badalyan. Khorhurdayin Hajastani 7 LKhIM–i taracqneri korustnery 1920–1930–akan tvakannerin. Yerevan, 2015, (In Armenian).
5. **Manasyan A.S.** Kharabahskij konflikt: mejdunarodno priznannye osnowanoq problem, Stepanakert, 2007.
6. **Manasyan A.S.** Patmakan pastarknery Kharabakhyan hakamartutyan kargavorman hamateqstum. “21–rd dar”, Noravanq hrat., N 4. 2017, 17–46 edj, (In Armenian).
7. Nagorny Kharabakh v mejdunarodnom prawe i miroeoj politike. Dokumenty I kommentarii. T. 1. M., 2008.
8. **Orjonikidze G.K.** Stati i retchi.V dvukh tomakh. M., 1956, p. 140.
9. Sbornik uzakonenij i rasporyajenij Raboche–Krestyanskogo prawitelstva ASSR za 1923 g. Baku, 1923, p. 384–385.
10. Zakon Sojuza Sovetskikh socialisticheskikh Respublik ob osnownikh polnomochijakh kraevikh, oblastnikh Sovetov narodnikh deputatov, Sovetov narodnikh deputatov avtonomnikh oblastey I avtonomnikh okrugon (prinyat na tretej sessii Verkhovnogo Soveta SSSR devyatogo soziwa 25 ijunya 1980 g., M., 1980.
11. Vedomosti syezda narodnykh deputatov SSSR i Verkhovnogo Soveta SSSR , 1990, N 15, p. 252.
12. Vedomosti Verkhovnogo Soveta SSSR, 1989, N 3, p. 14.
13. «Bakinskij rabochij» gaz., 3 dentjabrja, 1991.
14. «Bakinskij rabochij» gaz., 7 nojabrja, 1991.